

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

**«ԵԿԷՔ ԻՄԱՆԱՆՔ
 ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
 ԹԵ ԻՆՉ ՊԱՏԱՅԱԾ Է
 1915-ԻՆ»**

ՏՕԳՔ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Մեր նախորդ համարով անդրադարձանք Հայոց Ցեղասպանության նախնական գարգացման արդի դրական հունաւորումներուն մասին: 1915-թ.ին, ազգի մը ու մարդկութեան դէմ գործած չարիքին համար Օսմանեան Թուրքիոյ անպատիժ մնալը, եւ անոր ժառանգորդ, արդի Թուրքիոյ, նոյնպէս անպատիժ մնալը իր յամառ ուրացումին համար՝ յետագայ տարիներուն դուրքացած էին բազմամիլիոն անմեղ մարդոց բնաջնջումին: Այս գիտակցութիւնը յետադարձօրէն միջազգային քաղաքական մտածողութիւնը: Այսօրուան դրութեամբ, բացառաբար կարգ մը նկատառելի տերութիւններէ՝ աշխարհ տակաւ կը կողմնորոշուի ի նպաստ Հայոց Ցեղասպանութեան նախնական գարգացման:

Այս կացութեան դէմ յանդիման, ինչպէս միշտ դիտել տուած ենք մեր նախորդող յոգուածներու մէջ, թէ՛ անգամ Թուրքիա, պատրաստ է վերջակէտելու իր ուրացումը, եթէ գտնուի բանաձեւում մը, որ բնութեցնէ իր նոր սերունդներուն «ամօթը» եւ «պետական պարտաւորութիւնները» հայ ժողովուրդի հանդէպ:

Ա.հա՛ ապացոյցը:
 Ապրիլեան այս օրերուն, Ափիւրֆի բովանդակ տարածքին, մեր ժողովուրդը ըստ արժանոյն ոգեկոչեց եւ տակաւին կը շարունակէ ոգեկոչել Մեծ եղեռնի 1,5 միլիոն նահատակներու անմեղ յիշատակը: Մեր ազգային բոլոր կառոյցները՝ ըլլան անոնք քաղաքական, կրօնական, երիտասարդական, մշակութային, կրթական եւ գեղարուեստական՝ կազմակերպեցին բովանդակալից, ուրոյն, այլ ոգեւորիչ հանդիսութիւններ, որոնց շարքը կ'երկարի տակաւ:

Վերոյիշեալ նախաձեռնութիւններուն հիմնական առաջադրանքը հանդիսացաւ ազգով մէկ, միասնականօրէն տէր կանգնել մեր ազգային ժառանգութիւններուն: Համահունչ հետապնդել մեր պահանջատիրական պայքարը հայոց դէմ գործադրուած 1915-ի Ցեղասպանութեան նախնական գոծով: Միասնական շարքերով տարհամոզել աշխարհը, թէ, հրեաներու ողջակիզումը վկայ, Ռուստան փաստ՝ «Ցեղասպանութիւնը» անպատիժ բողոքը սպառնալիք է ցեղասպանական նոր գործընթացներուն: Տարհամոզել աշխարհը, թէ սակարկելի չէ միլիոնաւոր հայ նահատակներու քափած ծով արեան հատուցումը: Բախտն ու բնաջնջ դարձած ազգային հարուստ մշակոյթը ունի իր գինը, որ պարտադիր պիտի

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 92-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՐԴԸ ՀԱՐԻՒՐ ՀԱԶԱՐՆԵՐՈՎ ԱՅՑԵԼԵՑ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ ՀԱԿԱՌԱԿ ՏԵՂԱՑՈՂ ՁԻՒՆԻՆ ԳՈՐԾ ՊՈՒՇ ԴԱՐՁԵԱԼ ԶԳՈՐԾԱԾԵՑ «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ» ԲԱՈԸ

Ապրիլ 24-ին առաւօտեան Երեւանի մէջ տեղացող յորդառատ անձրեւը վերածուեցաւ ուժեղ ձիւնի, սակայն այդ բոլորը չազդեց ժողովուրդի վրայ, որոնք հարիւր հազարներով մասնակցեցան Հայկական Ցեղասպանութեան 92-րդ տարելիցին, այցելելով Ծիծեռնակաբերդ եւ յարգանքի տուրք մատուցելով զոհերու յիշատակին: Ամբողջ օրուայ ընթացին մարդկային հոսքը, ինչպէս ամէն տարի, դադար չունեցաւ: Իրար կողքին քալեցին պարզ քաղաքացիներն ու քաղաքական գործիչները եւ երկրի ղեկավարները:

Ռոբերտ Քոչարեանի, վարչապետ Սերժ Սարգսեանի եւ Ազգային Ժողովի նախագահ Տիգրան Թորոսեանի ներկայութեան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի գլխաւորութեամբ անմար կրակի մօտ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն:

Օրուայ ընթացքին երկրի Քաղաքական բոլոր ուժերը Մեծ եղեռնի զոհերու յիշատակին յարգանքի տուրք մատուցելու համար Ծիծեռնակաբերդ այցելեցին հա-



Հնչակեան պատուիրակութիւնը Ընկ. Սեդրակ Անեմեանի գլխաւորութեամբ ծաղիկներ կը գետնդէ, իսկ Կուսակցութեան դրօշը կը խոնարհի անմար կրակին առջեւ

մախոհներու հետ միասին, որոնք կը կրէին նաեւ կուսակցական դրօշներ ու Թուրքիան դատապարտող պաստառներ:
 Ս.Դ. Հնչակեան Կուսակ-

ցութիւնը Ծիծեռնակաբերդ այցելեց մեծ պատուիրակութեամբ մը, որ կը գլխաւորէր Կեղերոնական

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԾ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՄԵՉ



Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչները ծաղիկեղանակ կը գետնդնեն Մոնթեպելլոյի Նահատակաց Յուշարձանին

Ապրիլ 24ը հայ ժողովուրդի տարեցոյցի ամենատիրուր օրն ըլլալով, աշխարհացրիւ հայութիւնն ամէնուրեք նշեց իր նահատակներու օրը: Արդարեւ, նոյն օրը տասնեակ մը միջոցառումներ տեղի ունեցան Լոս Անճելոսի մէջ:
 Նախորդ տարուան նման այս տարի եւս Միացեալ Հայ Երիտասարդական Միութիւնը՝ Հոլիվուտի գլխաւոր պողոտաներուն վրայ, բողոքի եւ պահանջատիրութեան մեծ ցոյց մը կազմակերպած էր: Այս առթիւ բազմազգար ցուցա-

րարներու առջեւ ելոյթներ ունեցան Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան եւ այլ անձնաւորութիւններ, որոնք ոգեկոչելով մէկ ու կէս միլիոն հայ նահատակներու յիշատակը՝ յորդորեցին շարունակել պայքարը մինչեւ վերջնական յաղթանակ:
 Երեկոյեան բազմամարդ ուսանողական ցոյց մըն ալ տեղի ունեցաւ Լոս Անճելոսի թրքական հիւպատոսարանին առջեւ, պահանջ-

ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՒ ՆԻՒ ԵՈՐՔԻ ԵՒ ՈՒՇԻՆԿԹԵՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՒՆ

Ս.Դ.Հ.Կ. Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) ներկայացնող պատուիրակութիւն մը Նիւ Եորքի եւ Ուաշինկթընի մէջ մասնակցեցաւ Հայոց Ցեղասպանութեան 92-րդ տարելիցին նուիրուած միջոցառումներուն: Քալիֆորնիայէն ժամանած Միութեան անդամները, Ամերիկայի արեւելեան ափի իրենց ընկերներուն հետ Կիրակի, Ապրիլ 22-ին Նիւ Եորքի «Թայմզ» հրատարակին վրայ ներկայ եղան Վարդանանց Ասպետներու կազմակերպած հաւաքին:

Աւանդական դարձած այդ հաւաքի ընթացքին ելոյթ ունեցան ծերակուտականներ Չարլզ Շոմմըր եւ Ռոպըրթ Մենենտէզ, Ներկայացուցիչներու Տան անդամներ՝ Ֆրանք Փալոն, Ատըմ Շիֆ եւ Քարոլին Մալոնի ու նաեւ Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու նախկին դեսպան ձոն Էվընզ: Բոլոր ելոյթ ունեցողները պահանջեցին Հայկական Ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւի վաւերացումը Գոնկրէսին ներս: Անոնք նաեւ կոչ

ԼՈՒՐԵՐ

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»-Ը ԳՈՐԾԱՐՔ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Հանրապետությունը կուսակցությունը՝ ընտրությունից 19 օր առաջ, լրատվամիջոցների միջնորդություններով արագորոշված առաջարկները իշխանություններին:

«200 հազար ձայն որպես «Ֆորա»՝ այս գլխից, թող գրեն իրենց օգտին, բայց վերջացնեն վարչական ճնշումները, բարեգործական «ասպատակությունը», ուղղեն քարոզչության եթերաժամանակը: կուսակցության առաջարկած գործարքի պայմանները ներկայացրեց «Հանրապետություն» կուսակցության քաղաքականության անդամ, նախընտրական շտաբի պետ Սմբատ Այվազեանը:

Նոյնիսկ առաջարկուող պայմաններում կուսակցության անդամները համոզված են, որ իշխանությունը հաշտություն է ընտրողների ընդամենը 10-15% ձայն, եւ ընդդիմությունը այդ պայմաններում էլ յաղթելու է: «Այսօր Հայաստանում կայ 1 միլիոն 200 հազարից մինչեւ 1 միլիոն 250 հազար մարդ: Մենք տեղեկ ենք, չէ՞, այդ թուերից, ընտրությունների ժամանակ մենք էլ ենք հաշուում: Բաժանուղ ընտրակաշառքի դեպքում էլ, ամենալարուած ընտրու-

թիւնների ժամանակ քուէարկութեան է մասնակցում 700 հազար մարդ: 800 հազար մարդ: Եթէ այդ թուերից 1 բիւլետեն աւելի լինի՝ նշանակում է լցոնում եւ նկարչութիւն», - համոզուած է Սմբատ Այվազեանը:

Չնայած վերոնշեալ յայտարարութիւններին, «Հանրապետություն» կուսակցության քաղաքականության անդամներ Սմբատ Այվազեանն ու Սուրէն Սուրենեանցը համոզուած են, որ նախընտրական իրավիճակը չի փոխուելու, ուստի կուսակցության գրասենեակում այսօր հրաւիրուած ասուլիսի ժամանակ յայտարարեցին, որ «արդեն կասկածի տակ է մայիսի 12-ի ընտրությունները»:

«Հանրապետություն» կուսակցության քաղաքականության անդամ Սուրէն Սուրենեանցն բացատրեց «իրական ընդդիմություն» ներկայացնող ուժերին. դրանք են «Իմպիւրիալիզմներ» դաշինքը, ՀՀԸՆ, «Նոր ժամանակներ» եւ Հիշակեան կուսակցությունները: Լրագրողների հարցին, թէ «Ժառանգություն» այդ դեպքում ի՞նչ ընդդիմություն է՝ Սուրէն Սուրենեանցը պատասխանեց. «գործընկեր կուսակցություն է»:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ Է ՆՇԱՆԱԿՈՒԵԼ ՄԻՔԱՅԷԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ

«Ա.Ձ.Ա.Տ.Ո.Ի.Թ.Ի.Ն.Ո.Ա.Տ.Ի.Ո.Յ»: Ապրիլ 24-ին Հայաստանի պաշտպանության նոր նախարար է նշանակուել Միքայէլ Յարութիւնեանը, որը մինչեւ այժմ կատարում էր նախարարի պարտականութիւնները:



Հայաստանի Պաշտպանութեան նոր նախարար Միքայէլ Յարութիւնեան

Գեներալ-գնդապետ Միքայէլ Յարութիւնեանը ծնուել է 1946 թուականին Ատրպէյճանի Շեմախի շրջանի Սազիեան գիւղում: Աւարտել է Պաքուի բարձրագոյն զինուորական համալսարանի հրամանատարական ուսումնարանը, Ֆրունզէի անուան ռազմական ակադեմիայի հետախուզական ֆակուլտետը եւ ԽՍՀՄ-ի զինուած ուժերի գլխավոր շտաբի ռազմական ակադեմիան:

Նախ ստեղծելու հնարաւորութեան մասին՝ Միքայէլ Յարութիւնեանն ասաց. - «Չկայ մի գեներալ, որը չմտածի պրոֆեսիոնալ բանակի մասին: Բայց պրոֆեսիոնալ բանակ ունենալու համար անհրաժեշտ է, որ տնտեսութիւնը լաւ զարգանայ»:

Պաշտպանութեան նախարարութեան խօսնակ Սէյրան Շահսուվարեանը «Ազատութիւն» ռադիոկայանին այսօր յայտնեց, որ ըստ նախարարութեան կանոնադրութեան՝ գլխավոր շտաբի պետի պաշտօնը թափուելու մնալու դեպքում այն զբաղեցնում է գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալը: Հետեւաբար՝ Միքայէլ Յարութիւնեանի նախարար նշանակուելուց յետոյ գլխավոր շտաբի պետի պաշտօնը կը զբաղեցնի Էնրիկո Ապրիամովը: Մայիսի 12-ի խորհրդարանական ընտրութիւններից յետոյ կառավարութիւնը վայր է դնելու իր լիազօրութիւնները:

1994 թուականից զբաղեցրել է Հայաստանի զինուած ուժերի գլխավոր շտաբի պետի եւ պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալի պաշտօնը:

Պաշտպանութեան նախկին նախարար Սերժ Սարգսեանի վարչապետ նշանակուելուց յետոյ դարձել է պաշտպանութեան նախարարի պաշտօնակատար:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ արդե՞օք իր նշանակուելուց յետոյ բանակում փոփոխութիւններ են լինելու, Միքայէլ Յարութիւնեանը պատասխանեց. - «Բանակն այնպիսի երեւոյթ է, որ միշտ էլ փոփոխութիւններ լինում են»:

Խօսելով պրոֆեսիոնալ բանակի ստեղծելու հնարաւորութեան մասին՝ Միքայէլ Յարութիւնեանն ասաց. - «Չկայ մի գեներալ, որը չմտածի պրոֆեսիոնալ բանակի մասին: Բայց պրոֆեսիոնալ բանակ ունենալու համար անհրաժեշտ է, որ տնտեսութիւնը լաւ զարգանայ»:

ԲԱՐԳԱԻՆ ԶԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԳՈՐ Է

ԵՐԵՒԱՆ, 23 ԱՊՐԻԼ, ՆՈՅՆԱՆ ՏԱՊԱՆ: Չնայած վերջերս տեղի ունեցած «տհաճ միջադէպերին», «Բարգաւաճ Հայաստան» կուսակցության (ԲՀԿ) նախընտրական քարոզարշաւն ընթանում է հանդարտ եւ բնականոն հունով: Այս մասին

Ապրիլի 23-ի ասուլիսում յայտարարեց ԲՀԿ-ի քաղաքական խորհրդի անդամ Արթուր Թամազեանը: Նա նշեց, որ թէեւ ԲՀԿ-ի դէմ կիրառուել է կիրառում են սեւ տեխնոլոգիաներ, իրենք ընդհանուր առմամբ գոհ են քարոզարշաւի ըն-

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ԶԱՅՐԱՑՐԷ Է ՄԻԱՄԻՏ ԼՈՒԵՑԻՆԵՐԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»:

«Նոր ժամանակներ» կուսակցության նախագահ Արամ Կարապետեանին այսօր վանաձորում դիմաւորեց թիւ 31 ընտրարածքում մեծամասնական ընտրակարգով առաջադրուած Վիկտոր Դալլաքեանն ու մօտ 2000 վանաձորցիներ, որոնց թիւը հանդիպման ընթացքում աւելանում էր: Վանաձոր քաղաքի Արցախի հրապարակում լուսեցիները տեսնելով «Նոր ժամանակներ» կուսակցության նախագահ Արամ Կարապետեանին՝ միանգամից պատմեցին, թէ ինչ է տեղի ունեցել մինչեւ նրա ժամանելը: «Մեզ ասացին, որ ի դուր չհաւաքուենք, չէք գալու: Երէկ էլ էստեղ էր վարչապետ կոչուածն էր: Մեզ ասում էր, որ բացի իրենից մնացածներին քչենք: Ինչի՞ մարդիկ անասու են, որ քչենք: Բա դա դեկավարի խօսք է, դեկավարի պահուածք է: Դե, դուք ասէք», - դժգոհեց տարեց մի կին:



Վիկտոր Դալլաքեան եւ Արամ Կարապետեան վանաձորցիներու հետ հանդիպման ժամանակ

«Նոր ժամանակների» հանդիպումը վանաձորցիների հետ սկսուեց Վիկտոր Դալլաքեանի ելոյթով. «2003թ. դուք ոտքի կանգնեցիք եւ յաղթեցիք Քոչարեանին, Սերժին, մարզպետին, ԿԲ-ին: Ինձ ընտրելով՝ յաղթեցիք դուք: 2007թ.-ին ՀՀ-ում իշխանափոխութիւնը սկսուելու է վանաձորից»:

Ի դէպ, օր մը առաջ նոյն Արցախի հրապարակում վանաձորցիների հետ հանդիպել է նաեւ Սերժ Սարգսեանը: «Երէկ ով ձեզ այստեղ հեքիաթներ էր պատմում, դա հենց իր՝ վարչապետի կլանն է քանդում այս երկիրը, որը ձեզանից տարեկան 55 միլիոն դոլար է գողանում միայն ցորենի եւ հացահատիկի ներկրումից: Ընդհանուր առմամբ, նրանք ձեզանից տարեկան գողանում են 300 միլիոն ԱՄՆ դոլար: Ձեզ դեկավարում են յանցագործներ», - ասաց Վիկտոր Դալլաքեանը:

Ի պատասխան Դալլաքեանի ելոյթի՝ հաւաքուածները անէծքներով տարափ յղեցին Ռոբերտ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի գլխին: Դալլաքեանը կոչ արեց ժողովրդին իրենց ձայնը տալ ընդդիմութեան

թացքից: Պատասխանելով «ՆՈՅ-ԵԱՆ ՏԱՊԱՆ»-ի թղթակցի այն հարցին, թէ ի՞նչ է կուսակցութիւնը հակադրում այդ սեւ տեխնոլոգիաներին, Ա.Թամազեանը նշեց, որ իրենք մեծամասամբ անպատասխան են թողնում դրանք, որովհետեւ «հակաքարոզչութեան հեղինակների նպատակն էլ հենց այն է, որ իրենք մտածեն դրանից պաշտպանուելու ուղիներ գտնելու մասին»:

Լրագրողներից մէկի այն դիտարկմանը, «թէ ընտրութիւններին մասնակցող միւս կուսակցութիւնները ԲՀԿ-ին մեղադրում են ընտրակաշառք բաժանելու մէջ», «Բարգաւաճ Հայաստան»-ի մամուլի հարցերով պատասխանատու Արամ Սաֆարեանը պատասխանեց, որ թէ՛ կուսակցութեան առաջնորդ Գագիկ Ծառուկեանը, թէ՛ միւս անդամները բազմիցս յայտարարել են, որ «ԲՀԿ-ն ընտրակաշառք չի բաժանելու»: Նրա խօսքերով, «սա կապ չունի այն բարեգործական գործունէութեան հետ, որ արդէն մի քանի տարի իրականացնում է «Գագիկ Ծառուկեան» հիմնադրամը եւ Ծառուկեանների ընտանիքը»:

ներկայացուցիչներին: Շարունակելով վարչախմբի յանցանքների շարքը՝ Արամ Կարապետեանը նրանց վանաձորցիներին ասաց. «Ռոբերտ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը մեղքի ժուլիկներ են»:

Նա նաեւ յիշեցրեց ներկայիս վարչախմբի օրօք իրականացուած բոլոր յանցագործութիւնները, այդ թւում՝ Հոկտեմբերի 27-ը եւ դրանցից ունէ մէկը չբացայայտուելը. «Դրա նպատակը մեզ բոլորիս վախեցնելն է: Հիմա մենք կանգնած ենք ձեր առաջ եւ հատ-հատ նշում ենք բոլոր նրանց անունները, ովքեր թախնուտ են մեր երկիրը: Ես բացայայտ ասում եմ, որ չեմ վախենում եւ գնալու եմ մինչեւ վերջ: Դարաբաղեան կլանը Հայաստանում աւարտել է իր գործը: Որքան շուտ հեռանան, այնքան քիչ կը դատուեն»: Նա յայտարարելով, որ Հայաստանի ամենահարուստ 10 մարդիկ 2 միլիարդից աւել կարողութիւն ունեն, «Մի հատ ասէք, Դարաբաղու՞մ էք այդ կապիտալը ստեղծել»:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի ԽՄԲԱԳՐՈՒ ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ ՍԱՀՄԱԹՈՒԹԵԱՆ ՎԱՋԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ Գեղ. (626) 797-7680 Ֆաքս. (626) 797-6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ԿԱՏԱՐԵՑ «ԿԱՐԷՆ ԴԵՄԻՐՃԵԱՆ» ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ



Վարչապետ Սերժ Սարգսյանն ելույթ է ցուցնում Կարեն Դեմիրճեանի թանգարանի բացման ընթացքին. կողքին Դեմիրճեանն և ընտանիքի անդամները

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանն Ապրիլ 20-ին բացեց Կարեն Դեմիրճեանի թանգարանը: «Այսօր մենք մասնակցում ենք հայ ժողովրդի տաղանդալոր գաւակ, նրա պատմութեան խորհրդային եւ հետխորհրդային ակնաւոր, առանցքային գործիչներից մեկի՝ Կարեն Դեմիրճեանի յիշատակը յաւերժացնող միջոցառմանը:

Կարեն Դեմիրճեանի գործունէութիւնը արտացոլուած է այս թանգարանի ցուցանմուշներում, այն խոր հետք է թողել հայ իրականութեան մէջ. հենց այս գիտակցումով էլ կառավարութիւնը՝ Անդրանիկ Մարգարեանի ղեկավարութեամբ, որպէս գործընկեր ունենալով «Կարեն Դեմիրճեան» բարեգործական հիմնադրամը, հիմնեց այս թանգարանը: Ասում են անձն իր երկրային կեանքում ապրում է այնքան, ինչքան ապրում է նրա անունը, այս թանգարանը կոչուած է յաւերժացնելու Կարեն Դեմիրճեանի յիշատակը», - յայտարարեց Սերժ Սարգսյանը:

Իսկ Կարեն Դեմիրճեան թանգարանի տնօրէն Ռիմա Դեմիրճեանը բաւականին յուզուած էր, որովհետեւ այսօր գիտակցել էր, որ «Կարենի կեանքը ապարդիւն չանցաւ, նրա կատարած գործերը, կեանքը՝ նուիրուած ժողովրդին, գնահատուեց: Նա իր գործունէու-

թեամբ դառնում է պատմութեան էջ», - ասաց Ռիմա Դեմիրճեանը:

Թանգարանի բացումը իրականացրեցին՝ կարմիր ժապաւէնը կտրեցին Ռիմա Դեմիրճեանն ու Սերժ Սարգսյանը: Թանգարանի բացման արարողութեանը ներկայ էր ՀժԿ նախագահ Ստեփան Դեմիրճեանը, որը ձեռքբերումով չբարեւեց ոչ Սերժ Սարգսյանին, ոչ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսեանին, թէեւ վերջինիս հետ բաւականին բարիդրացիական յարաբերութիւններ ունի: Ժապաւէնը կտրելուց յետոյ վարչապետը, ԱԺ նախագահը, գործող ու նախկին նախարարներ, ԳԱԱ գործող եւ նախկին նախագահները, եւ այլոք սկսեցին շրջել թանգարանով: Կարեն Դեմիրճեանի թանգարանի ցուցանմուշները մեծապատիւ հիւրերին ներկայացնում էր անձամբ Կարեն Սերոբէիչի եղբայրը: Իսկ առաջին գրութիւնը յուշամատենում թողեց ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը, ինչից յետոյ նրան նուիրեցին Դեմիրճեանի գրքի երկատորեակը եւ օբսիդիանէ կազմով մէկ այլ գիրք:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ հնարաւոր է ՀժԿ-ի հետ համագործակցութիւն, Սերժ Սարգսյանը պատասխանեց. «Մինչեւ ընտրութիւններ ոչինչ չեմ բացառում»:

ՄԱՍՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ԸՆԿՆԱՍՏԱՆՈՒՄ ՍԱՐԿՍԵԱՆԻ ԿՈՒՐՄԵՆԻ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Չնայած մարդու իրաւունքների բնագաւառում գրանցած որոշ բարելաւումներին՝ մամուլի ազատութիւնը Հայաստանում սահմանափակուած է, անկախ մամուլը գտնուում է ճնշման ներքոյ, հեռարձակուող մամուլն իշխանամէտ է: Այս մասին ասուած է վիեննայում գործող Մամուլի միջազգային ինստիտուտի զեկոյցի՝ Հայաստանին վերաբերող բաժնում:

Զեկոյցում նշուած է, որ 2006 թուականին «Ա1+»-ի հեռարձակման լիցենզիան վերստին մերժուել է. 2002 թուականին եթերից զրկուելուց յետոյ այդ հեռուստաընկերութիւնը 11 անգամ դիմել է լիցենզիա ստանալու համար եւ ամէն անգամ մերժուած է ստացել:

«Տպագիր մամուլը Հայաստանում աւելի բազմազան է, սա-

կայն թերթերն ունեն ֆինանսական եւ տնտեսական խնդիրներ», - նշում է Մամուլի միջազգային ինստիտուտը:

«Ժամանակ Երեւան» անկախ պարբերականի խմբագիր Արման Բաբաջանեանին գինձառայութիւնից խուսափելու մեղադրանքով 4 տարուայ ազատազրկման դատապարտելու վճռի վերաբերեալ զեկոյցում ասուած է, որ մի շարք թերթեր եւ իրաւապաշտպան կազմակերպութիւններ դատապարտել են այդ փաստը՝ պնդելով, թէ լրագրողին ներկայացուած մեղադրանքների հիմքում քաղաքական շարժառիթներ են, եւ «իշխանութիւնները վրէժ են լուծել Բաբաջանեանից՝ «Ժամանակ Երեւան»-ում կառավարութեանը քննադատող նիւթեր հրատարակելու համար»: Բաբաջանեան էլ

«ԼԱԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ՍԵՒ ՔԱՐՈՉՉՈՒԹԻՒՆ» ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է «ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ»

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Օրինաց երկիր» կուսակցութիւնը Ապրիլ 23-ին յայտարարել է, որ «անընդունելի է համարում ընտրութիւնների նախօրէին կեղծ տեղեկատուութեան տարածումը մամուլի միջոցներով»:

«Արթուր Բաղդասարեանը բազմաթիւ հանդիպումներ է ունենում տարբեր երկրների ներկայացուցիչների հետ, որտեղ, բնականաբար, քննարկում են առաջիկայ ընտրութիւններին առնչուող խնդիրներ: Աւելին, իր հրապարակային ելոյթներում Արթուր Բաղդասարեանը բազմիցս խօսել է դրանք միջազգային չափանիշերին համապատասխան անցկացնելու անհրաժեշտութեան մասին եւ յայտարարել, որ միջազգային հանրութիւնը եւս անտարբեր չէ այս երեւոյթների նկատմամբ, քանի որ Հայաստանը ստանձնել է միջազգային պարտաւորութիւններ», - ասում է յայտարարութեան մէջ, որով ՕԵԿ-ն արձագանքել է «Գոլոս Արմենի» թերթի շաբաթ օրուայ հրատարակմանը, համաձայն որի, Փետրուարին Երեւանի «Մարկո Պոլո» ռեստորանում «Օրինաց երկիր»-ի առաջնորդ Արթուր Բաղդասարեանը զրուցել է բրիտանական դեսպանատան բարձրաստիճան մի պաշտօնեայի հետ եւ փորձել նրան համոզել, որ միջազգային հանրութիւնը պէտք է միջամտի

նախընտրական գործընթացներին եւ խիստ բացասական գնահատականներ տայ:

«Ինչ վերաբերում է ինչ-որ երկամսեայ վաղեմութիւն ունեցող ձայնագրութեանը, ապա դա լաւ պատրաստուած սեւ քարոզչութիւն է: Յուսով ենք, որ մեր բոլոր հանդիպումների ձայնագրութիւնները ունէք եւ լսելով՝ կը համոզուէք, որ «Օրինաց երկիր»-ը մասնաւոր ելոյթներում ասել է նոյնը, որ Հայաստանի առաջիկայ ընտրութիւնները պէտք է համապատասխանեն միջազգային չափանիշներին, քանի որ դա են պահանջում թէ մեր երկրի շահերը եւ թէ միջազգային հանրութիւնը»:

- յայտարարում է «Օրինաց երկիր»-ը: Թերթի այն եզրայնագման առնչութեամբ, թէ Արթուր Բաղդասարեանը ցանկանում է, որ առաջիկայ ընտրութիւնները հեղինակագրկեն Հայաստանը, «Օրինաց երկիր»-ը ընդգծում է. «Երկրի վարկանիշը պետք է ընտրութիւնները կեղծողները, ոչ թէ հրապարակային դաշտում այս մասին խօսող ուժերն ու գործիչները: Իսկ թէ ում է ձեռնուող քարոզարշախի թէ՛ պահին սեւ քարոզչութիւն իրականացնելը՝ սա նոյնպէս պարզ է եւ ակնյայտ, քանի որ «Գոլոս Արմենի» թերթն իր գրեթէ իւրաքանչիւր համարում փորձում է վարկաբեկել ՕԵԿ-ին»:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԵՄՊԱՆԱՏՈՒՆԸ «ԱՆՇԱՆԳՍԱՑԱԾ ԵՒ ԸՆԿՆԱՍՏԱՆՈՒՄ Է»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատունը «անհանգստացած եւ հիասթափուած է դեսպանատան պաշտօնեայի եւ ընդդիմադիր կուսակցութեան ղեկավարներից մեկի միջեւ տեղի ունեցած զրոյցի գաղտնալսման եւ վերջերս մամուլում դրա ձայնագրութեան որոշ մասերի հրատարակման հանգամանքով»:

Միաժամանակ, այսօր տարածած հաղորդագրութիւնում դեսպանատունը ձեռնպահ է մնում «զրոյցի մեծ խեղաթիւրումը» հանգամանօրէն մեկնաբանելուց՝ ընդգծելով, որ «դրա մանրամասները թերեւս ձեռք են բերուել անազնիւ եւ անյարիւր եղանակով»:

«ԵԱՀԿ-ի, Եւրոպական միութեան, Եւրոպական խորհրդի, դիւանագիտական հանրութեան եւ այլոց հետ մեկտեղ դեսպանատունը հետաքրքրուած է մայիսի 12-ին տեսնել միջազգային չափանիշներին համապատասխանող ընտրութիւններ: Այս համատեքստում, դեսպանատունը պահանջում է լայնածաւալ կայքեր եւ շփումներ Հայաստանի քաղաքական դաշտում գործող կառույցների եւ անհատների հետ՝ քաղաքական կարծիքի բոլոր երանգներին ծանօթ լինելու համար», - ասուած է հաղորդագրութիւնում: «Սա մեզ հնարաւորութիւն է տալիս հնարաւորինս համապարփակ եւ օբիեկտիւ կարծիք կազմել քաղաքական գործընթացի մասին եւ համապատասխանում է աշխարհում ցանկացած դեսպանա-

տան բնականոն եւ ընդունուած գործելակերպին»:

«Որպէս Եւրամիութեան անդամ պետութիւն, մենք լիովին աջակցում ենք ԵՄ-ի եւ Հայաստանի միջեւ Եւրոպական հարեւանութեան քաղաքականութեան գործողութիւնների պլանի շրջանակներում ստանձնուած պարտաւորութիւնը՝ միասին աշխատելու ժողովրդավարական կառույցներն ուժեղացնելու եւ մարդու իրաւունքներն ու հիմնարար ազատութիւնները շարգելու ուղղութեամբ, եւ մենք ողջունում ենք մինչ այժմ Հայաստանի ժողովրդավարական ձեռքբերումները», - յայտարարում է բրիտանական դեսպանատունը:

«Այս համատեքստում, մեր նպատակն է մնում անել ինչ կարող ենք՝ աջակցելու եւ խթանելու երկրում ժողովրդավարական կառույցների եւ գործընթացների արդիւնաւէտութիւնը», - վստահեցնում է դեսպանատունը՝ ամփոփելով. - «Մեր գործը չէ, երբեք չի եղել եւ չի կարող լինել որեւէ քաղաքական կուսակցութեան ծրագրին աջակցելը»:

«Գոլոս Արմենի» թերթը հատուածներ է հրատարակել «Օրինաց երկիր» կուսակցութեան ղեկավար Արթուր Բաղդասարեանի եւ Հայաստանում Մեծ Բրիտանիայի փոխդեսպան Ռիչարդ Հայդի՝ այս տարուայ Փետրուարին Երեւանի «Մարկո Պոլո» ռեստորանում կայացած զրոյցի ձայնագրութիւնից:

«Ասել է, որ իր ձեռքակալութեան նպատակն է լուսնել անկախ մամուլը, որը չի վախենում քննադատել իշխանութիւններին»:

Ինստիտուտը փաստել է, որ 2006 թուականը «ամենավայրագ եւ դաժան տարին էր լրագրողներ-

րի համար». անցած տարի աշխարհում սպանուել է 100--ից աւելի լրագրող:

Լրագրողների համար ամենավտանգաւոր երկիրը Իրաքն էր՝ այնտեղ սպանուել է 46 լրագրող:

ԼՈՒՐԵՐ

ԹՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԴԻՍԵ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐՈՒ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՆԱԶՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Հայկական Ցեղասպանությունների տարեկան նախօրեակին, թրքական կառավարությունը դիմած էր լրիվ էջի վրայ հրատարակված վճարովի ծանուցումներում, որոնք լոյս տեսան աշխարհի տարբեր երկրներում մեծագույն թերթերում մէջ, նպատակ ունենալով կանխելու Ցեղասպանության ճանաչումը, յատկապես ամերիկյան Գոնկրէսէն ներս:

Շաբաթ, Ապրիլ 21-ին «Լոս Անճելըս Թայմզ» մէջ լոյս տեսած ծանուցումը, որ կը կրէր «միասնաբար յայտնաբերենք 1915-ին պատահածներուն իրականությունը», կոչ կ'ընէ Հայաստանին, որպէսզի կազմուի պատմաբաններու խումբ յանձնարուամբ մը՝ քննելու համար 1915 թուականի իրադարձութիւնները եւ կը խոստանայ յանձնաժողովին առջեւ բանալ թրքական արխիւները:

Անգարայի կողմ նման առաջարկութիւնը առաջին անգամ էջ

որ կը հնչէ, սակայն ուշագրաւ է ընտրուած պահը: Ցեղասպանությունների ճանաչման հարցը ոչ միայն խօսակցութեան առարկայ է ամերիկեան Գոնկրէսէն ներս, այլ նաեւ սկսած է լայն մաշտապով քննարկուել Միացեալ Նահանգներու խոշորագոյն թերթերուն կողմէ: Միայն վերջին օրերուն «Նիւ Եորք Թայմզ» եւ ապա «Լոս Անճելըս Թայմզ» յօդուածներով ու խմբագրականներով եկան անդրադառնալու Ցեղասպանությունների բանաձեւի հարցին եւ պահանջելու անոր ճանաչումը:

Այս գարգացումներու լոյսին տակ, Ուաշինկթընի մէջ թրքական դեսպանատունը նման ծանուցումի մը միջոցաւ կը փորձէ ազդել ամերիկեան հանրային կարծիքի վրայ, որպէսզի այս վերջինները միջամտեն իրենց ներկայացուցիչներուն մօտ, եւ անոնք իրենց կարգին ընթացք տան թրքական առաջարկին:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒՐՈՒԱԾ ԶԵՆԱՐԿՆԵՐ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՄԷՋ

Շաբաթ, Ապրիլ 21-էն

Չէլով արդարութիւն եւ ցեղասպանությունների ճանաչումը:

ԲԱԶՍԱՐԱԶԱՐ ԶԱՅԵՐ ՍՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ ՄԷՋ ԻՐԵՆՑ ԶՈԳՈՒ ՊԱՐՏԲԸ ԿԱՏԱՐԵՑԻՆ

Մեծ Եղեռնի զոհերուն նուիրուած աշխարհի երրորդ մեծագույն յուշարձանը կը գտնուի Մոնթեպելլոյի մէջ: Առաւօտեան ժամը 9ին սկսեալ, Հարաւային Գալիֆորնիոյ տարբեր շրջաններէն հայեր սկսան գալ Նահատակաց Յուշարձան, իրենց հոգիի պարտքը կատարելու թուրք եաթաղանին զոհ գացած մեր մէկ ու կէս միլիոն ազգակիցներուն:

Ժամը 10:30ին տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն, որմէ ետք յաջորդաբար ծաղկեպսակներ գետնեղեցին Հայաստանի աւագ հիւպատոս Պրն. Արմէն Լիլոյեանն ու հիւպատոսարանի անձնակազմը, ինչպէս նաեւ Հ.Յ.Դ.Ի, Ս.Դ.Հ.Կ.Ի, Ռ.Ա.Կ.Ի, Հ.Բ.Լ.Մ.Ի եւ այլ կազմակերպութեանց ղեկավարները:

Այնուհետեւ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, որուն իրենց մասնակցութիւնը բերին Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Գերշ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Հայ Կաթողիկէ ժողովրդապետ՝ Հայր Անտոն Սարոյեան, Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան հովուապետ Վեր. Ճօ Մաթոսեան եւ տասնեակ մը այլ հոգեւորականներ: Արարողութեան աւարտին ներկաները միաբերան երգեցին «Կիլիկիա»ն եւ Հայաստանի օրհներգը:

Այս տարի առաջին անգամ ըլլալով, քաղաքական միջիններ փոխարինուեցաւ ծաղիկներու մատուցման եւ դասական երաժշտությունների ունկնդրություններով, որ յաճախ կ'ընդմիջուէր ներկայ հասարակութեան փոխանցելով օրուան ընթացքը:

րակութեան փոխանցելով օրուան պատգամը՝ ձայնագրուած հայերէն եւ անգլերէն լեզուներով:

Երեւանի Միծեռնակաբերդի յուշարձանն այցելողներու նման այստեղ եւս հազարաւոր հայեր, մեծ կարգապահութեամբ, ծաղիկներ եւ մեխակներ բռնած, հերթով եկան եւ յարգանքով խոնարհեցան մեր անմեղ նահատակներուն յիշատակին առջեւ:

ԿԼԵՆՏԵՅԼԻ ԲԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԶԱՒԱՔ «ԱԼԵՔՍ» ԹԱՏՐՈՆԻՆ ՄԷՋ

Նոյն օրը երեկոյեան ժամը 6:30ին, Կլէնտէյլի «Ալէքս» թատերասրահ հաւաքուած էին շուրջ 1400 հոգի: Մեծ Եղեռնի 92րդ տարեդարձին նուիրուած սոյն ձեռնարկը իրականութիւն դարձած էր Կլէնտէյլ քաղաքի քաղաքապետական խորհուրդի նախաձեռնություններով եւ աջակցութեամբ եւ հայ աւանդական երեք կուսակցութեանց հովանաւորութիւնը վայելող միացեալ յանձնախումբին: Զեռնարկը սկսաւ Կլէնտէյլի Հայ Սքուլի երգչախումբի կողմէ Ամերիկայի եւ Հայաստանի օրհներգի կատարումով: Մարթին Քէնթ եւ Ալէք Գուլումեան իրենց ելույթներուն մէջ գորակցեցան հայ ժողովուրդի արդար պահանջներուն: Այս առթիւ գործադրուեցաւ գեղարուեստական ճոխ յայտագիր մը, ղեկավարութեամբ կոմպոզիտոր Միքայէլ Աւետիսեանի:

Երեկոյն վերջ գտաւ ներկայ հոգեւորական պետերու «Հայր Մեր» տէրուական խմբերգով եւ «Պահպանիչ» արթթով:

Սոյն յիշատակելի ձեռնարկը ձեռնհասօրէն վարեց Կլէնտէյլի նորանշանակ քաղաքապետ Պրն. Արա Նաճարեան:

ԶԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 92-ԱՄԵԱԿ

Շաբաթ, Ապրիլ 21-էն

Վարչութեան ատենապետ Ընկ. Սեդրակ Աճէմեան:

«Ժառանգութիւն» կուսակցութեան ղեկավար Բաֆֆի Յովհաննիսեան դրական գնահատեց Հայոց Ցեղասպանությունների ճանաչմանն ուղղուած պայքարը, եւ «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին ըսաւ. - «Ես կարծում եմ, որ պէտք է սեւեռուել ոչ էլ շատ ոգեւորուել ճանաչման այս շարանով, որովհետեւ Հայոց Մեծ Եղեռնը, մեր ժողովրդի հայրենազրկումը պատմական իրողություններ է: Իսկ, Հայաստանի ժողովրդական կուսակցութեան առաջնորդ Ստեփան Դեմիրճեան, թուրքոյ հետ յարաբերություններուն անդրադառնալով, ըսաւ. - «Մենք հանդէս ենք գալիս այդ յարաբերություններին իրոյնքան որքան որքան զործնթացը սկսելու օգտին՝ առանց նախապայմանների: Սա բնաւ չի նշանակում, որ Ցեղասպանությունների ճանաչման հարցը պէտք է դուրս գայ մեր օրակարգից»:

ՃՈՐՃ ՊՈՒՇԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Եղեռնի տարեկիցին առթիւ Սպիտակ Տունը հրատարակեց նախագահ Ճորճ Պուշի յայտարարությունները, ուր դարձեալ կը բացակայէր «ցեղասպանություններ» բառը: 20-րդ դարու սկզբնաւորութեան թուրքիոյ մէջ տեղի ունեցած իրադարձությունները այս տարի նախագահը որակեց որպէս «զանգուածային սպանություններ»:

«Ամէն տարի այս օրը պահ մը մենք կանգ կ'առնենք, յարգելու համար 20-րդ դարու մեծագույն ողբերգութիւններէն մէկուն զոհերու յիշատակը. մէկեւկէս միլիոն հայեր իրենց կեանքը կորսնցուցին Օսմանեան կայսրութեան վերջին տարիներուն՝ զանգուածային սպանություններու եւ բռնի տեղահանման ժամանակ», - ըսուած է Ճորճ Պուշի խօսքին մէջ:

«Այսօր մենք կը յիշենք անցեալը եւ կը նայինք աւելի պայծառ ապագայի: Մենք կ'ողջունենք այն անհատները, որոնք Հայաստանի եւ թուրքիոյ մէջ կ'աշխատին իրենց երկիրներու միջեւ յարաբերությունները բարելաւելու նպատակով», - կը յայտարարէ Միացեալ Նահանգներու նախագահը, աւելցնելով որ, «Օսմանեան ժամանակաշրջանի վերջին շրջանին տեղի ունեցած պատմական իրադարձություններու անկեղծ ու բաց քննարկումը այս գործընթացի կարեւոր մասն է»:

Խօսքին մէջ նախագահ Պուշ կ'անդրադառնայ նաեւ դարաբաղեան հարցին շեշտելով որ, «Միացեալ Նահանգները հաւատարիմ կը մնայ Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման համար Հայաստանի եւ Ատրպէյճանի հետ աշխատելու իր յանձնառությունները»: «Մենք աշխատանքներ կը տանինք նաեւ Հայաստանի մէջ ժողովրդավարութեան եւ տնտեսական բարեփոխումներուն զարկ տալու ուղղութեամբ, ինչ որ առաջ կը մղէ ազատութեան եւ արդարութեան սկզբունքը», կ'եզրակացնէ նախագահ Ճորճ Պուշ իր խօսքին մէջ:

ԶԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՒ ՆԻՒ ԵՈՐՔԻ ԵՒ ՈՒՇԻՆԿԹԸՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՒՆ



Ամերիկեան Ծերակայտի Դեմոկրատ ղեկավարներէն Զարյո Մուվրը Ելոյթ կ'ունենայ «Թայմզ» հրատարակչի վրայ տեղի ունեցած հաւաքի ընթացքին

Շաբաթ, Ապրիլ 21-էն

ըրին թուրքիոյ որպէսզի ան պատասխանատուութիւն տանձնէ ոճիւրին համար:

Ուաշինկթընի մէջ, ՀԱԽ-ի անդամները ընկերակցութեամբ Հայկական Համագումարի ներկայացուցիչներուն, այցելութիւններ կատարեցին շարք մը գոնկրէսականներու գրասենեակները, քաջալերելով բոլորին որպէսզի ձայնակցին Հայկական Ցեղասպանությունները ճանաչող եւ թրքահայ մտաւորական Հրանդ Տինքի սպանությունները դատաւարտող բանաձեւերուն:

Ապրիլ 24-ի երեկոյեան, ՀԱԽ-ի անդամները ներկայ եղան «Գափիթոլ Հիլլի» մէջ տեղի ունեցած յուշահանդէսին, որ կազմակերպուած էր Ներկայացուցիչներու Տունէն ներս գործող Հայկական հարցերու համախմբումը: Ներկայ եղան Հանրապետական եւ Դեմոկրատ կուսակցութիւններու անդամ մեծ թիւով գոնկրէսականներ, որոնցմէ շատեր խօսք առնելով շեշտեցին, որ թուրքիա պէտք է հաշտուի իր անցեալին հետ, որպէսզի կարողանայ դառնալ իսկապէս ժողովրդավարական պետութիւն մը:

ՄԱՍԻՍ ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՏԵՍԱԿԵՏ

ՎԱՐՅԱԶՐՈՅՑ ՎԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ՝ ՎԱՅԿ ԴԵՄՈՅԵԱՆԻՆ ԸՆՏ

« Հայոց ցեղասպանութեան թանգարանը չի ներկայացնում միայն հայ ժողովրդի ողբերգական էջը, այլ՝ ուղղակիորեն եւ հաւասարապէս վերաբերում է նաեւ թուրք ժողովրդին: Իւրաքանչիւր թուրք, եթէ ուզում է ծանօթանալ իր պատմութեան իր համար դեռեւս անյայտ էջին՝ կարող է այցելել ցեղասպանութեան թանգարանը», - սա նոր կարգախօս է, որի հեղինակը Հայոց ցեղասպանութեան թանգարան ինստիտուտի տնօրէն, պատմական գիտութիւնների թեկնածու Հայկ Դեմոյեանը: Հայ-թուրքական յարաբերութիւնների, 1915թ-ի Հայոց ցեղասպանութեան ճանաչման շուրջ երկու երկրներում առկայ տրամադրութիւնների շուրջ «Ա1+»-ը գրուցեց պարոն Դեմոյեանի հետ:

«Ցեղասպանութեան վերապրումը կապուած է լուրջ հոգեբանական բարդոյթների եւ ձեւախեղումների հետ: Ցաւօք, մեր ցեղասպանագիտական դպրոցը չի անդրադարձել այդ խնդրին: Կա նաեւ մէկ այլ խնդիր՝ ինչպէս վերագնահատել, վերաբեւոյցել եւ մեկնաբանել: Այս խնդիրը դրուած է ոչ միայն մեր, այլեւ՝ թուրք հասարակութեան առաջ: Հայ հասարակութեան մէջ անհրաժեշտ է կրթաքաղաքական քաղաքականութիւն տանել: Այդ խնդիրն առաջին հերթին կարող է ստանձնել Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտը: Թանգարանը մի կենտրոն է, որ կարող է վաւերական նիւթեր ներկայացնել, առանց յուզականութեան, պաթետիկայի, սակայն ներկայացումը ենթադրում է որոշակի քաղաքականութիւն: Այն առաջին հերթին պէտք է միտուած լինի հանդուրժողականութեանը:

- Այսինքն ձեր բազա տուե՞նք թուրք-թշնամու կերպարից:

- Այո, մենք պէտք է ձեր բազա տուենք այդ բարդոյթից:

- Այսօր մեր հասարակութեան մէջ տիրող մթնոլորտը թոյլ է տալի՞ս ձեր բազա տուել այդ բարդոյթից:

- Դա այն հարցն է, որին միանշանակ «այո» կամ «ոչ» պատասխանել չի կարելի: Այս հարցում մենք ինքներս էլ խնդիր ունենք, եւ այն չի կապուած միայն հայ-թուրքական յարաբերութիւնների հետ: Մենք խօսում ենք հանդուրժողականութիւնից, սակայն մենք հանդուրժուե՞նք միմեանց: Որքանո՞վ մենք կարող ենք դառնալ պահանջատէր, երբ այդ մեքերագործումը չենք սկսում մեզանից: Քանի դեռ մենք չենք հանդուրժում միմեանց չենք կարող հանդուրժել նաեւ միւսներին, այդ թւում՝ թուրքերին:

- Գուցէ հարցը մի փոքր կոշտ է, սակայն կը խնդրէի պատասխանել: Այսօր թուրքը մեր թշնամին չէ՞:

- Ես չեմ համարում, որ թուրքը մեր թշնամին է: Ես թշնամի չեմ համարում նաեւ այն թուրքերին, որոնք զբաղուած են ժխտողականութեամբ, ովքեր նոյնիսկ հայատեաց են: Ես նրանց այլ կատեգորիաների մէջ եմ տեսնում՝ հակառակորդ, հայատեաց: Ես ողջունում եմ թէ՛ ակադեմիական շրջանակների, եւ թէ՛ բոլոր շարքային այն թուրքերին, որոնք առնուազն հանդուրժողականութիւն են ցուցաբերում հայերի եւ Հայաստանի նկատմամբ:

Այս առումով թուրքիայում էլ լուրջ խնդիր կայ, որը շատ խորքային է, խրոնիկ բնոյթ է կրում, եւ

դրսեւորում է արմատական ազգայնականութեանն ուղղուած վտանգաւոր ճանապարհով: Լինելով թուրքիայի անմիջական հարեւանը՝ այդ վտանգը նաեւ սպառնում է մեզ: Հայ-թուրքական յարաբերութիւնները ես համարում եմ միջնադարեան աթաբիզմ: 21-րդ դարի սկզբին մի երկիր նախապայմանների լեզուով է խօսում միւս երկրի հետ՝ դա կապելով մի երրորդ երկրի հետ: Սա ընդունուած ձեւ է միջպետական յարաբերութիւններում: Եկէք պատկերացնենք, որ Եւրոպայում, ուր ձգտում է թուրքիան, Գերմանիան շրջափակում է Չեխիային միայն նրա համար, որ Չեխիան խնդիր ունի Աւստրիայի հետ:

- Յայաստան ժամանած թուրքերը սկսել են այցելել Հայոց ցեղասպանութեան թանգարան: Հայ-թուրքական տոնտեսական համագործակցութեան յանձնաժողովի թուրք համախազակ պարոն Սոյակը Երեւանում ասաց, որ իր ընկերներից մէկը այցելել է թանգարան եւ նոյնիսկ ցաւ ապրել, որ հայերս այնքան էլ լաւ չենք պահպանում մեր թանգարանը: Վերջին ամիսներին, ճիշդ հակառակը, թանգարանը բաւականին բարեփոխուել է, ինչպէ՞ս կը մեկնաբանէք պարոն Սոյակի յայտարարութիւնը:

- Ճիշդն ասած, ես դժուարանում եմ ասել, թէ նա ի՞նչ նպատակ էր հետապնդում: Եթէ դա իսկապէս թուրք քաղաքացու կողմից արտայայտած սրտացաւութիւն է, ես ողջունում եմ, սակայն նման հարցերի շուրջ միջնորդաւորուած չեն խօսում:

- Ինչպէ՞ս եք գնահատում Հայոց ցեղասպանութեան ճանաչման ուղուած հայկական կողմի դիրքորոշումը:

- Համարում եմ քիչ թէ շատ հաւասարակշռուած: Մենք որեւէ պարագայում, որեւէ ճնշման տակ կամ խոստման դիմաց չենք գնալ չիշողութեան աղճատման կամ անտեսման եւ առաւել եւս մոռացութեան: Մենք սգալու եւ ոգեկոչելու ենք մեր զոհերին: Ամէն տարի ապրիլի 24-ին մենք գալու եւ յարգելու ենք նրանց չիշատակը: Դա մեր չիշողութիւնն է, մեր պատմութիւնը եւ մեր ինքնութեան մի մասը:

- Այսօր մենք ի՞նչ ենք ակնկալում թուրքիայից, աշխարհից եւ մեզանից:

- Սկզբունքորէն, առաջին հերթին մենք մեզանից պէտք է պահանջենք: Երկրորդ՝ պէտք է հետամուտ լինենք, որպէսզի արձանագրուի Հայոց ցեղասպանութեան փաստը: Եթէ այն արձանագրուած է որպէս ցեղասպանութիւն, ապա ենթադրուած է, որ պէտք է դատաւարտուի իբրեւ ծանր յանցագործութիւն: Իւրաքանչիւր ցեղասպանութեան դատաւարտում միտուած է նաեւ այն կանխելու: Ցաւօք, այսօր չկայ ցեղասպանութիւնը կանխարգելող ունիվերսալ մեխանիզմը:

Մարդկութիւնը երաշխաւորուած չէ նոր ցեղասպանութիւններից: Ես գտնում եմ, որ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը եւ դատաւարտումը առնչուում է հայ ժողովրդի եւ ՀՀ-ի անվտանգութեան ռազմավարութեանը: Այսօր այն երկիրը, որը ցեղասպանութիւն իրականացրած Օսմանեան կայսրութեան իրաւաւորըն է հանդիսանում, ՀՀ-ի

հետ, որտեղ բնակչութեան 50 տոկոսը ցեղասպանութեան ենթարկուածների յաջորդ սերունդ են, խօսում է ուլտիմատումի լեզուով:

- Այսօր Հայաստան ժամանած իւրաքանչիւր թուրք, 1915թ-ի Հայոց ցեղասպանութեան մասին խօսելիս ասում է, որ այդ տարիներին պատերազմ է եղել, եւ զոհուել են ինչպէս բազմաթիւ այլ ազգերի ներկայացուցիչներ, այնպէս էլ հայեր:

- Դա քարոզչական ձեւ է՝ ամէն ինչ համահաւասարեցնելու նպատակով: Ես չէի ցանկանայ պնդել, առաւել եւս ստիպել, որ իւրաքանչիւրը ակադեմիական մակարդակի սկզբնաղբիւրներից ծանօթանայ Հայոց ցեղասպանութեան փաստին: Այսօր ցեղասպանագիտութեամբ զբաղուող գիտնականների մեծամասնութիւնը բազմաթիւ նոտաներ է յղում միջազգային տարբեր կառույցներին: Վերջերս Հայոց ցեղասպանագիտական ուսումնասիրութիւններով զբաղողների նախագահը դիմեց ՄԱԿ-ի քարտուղարին՝ 1915թ-ի ոճրագործութիւնը հերքելը որակելով թուլութեան դրսեւորում: Ամբողջ ակադեմիական աշխարհն ընդունում է, որ 1915թ-ի ողբերգութիւնը ցեղասպանութիւն է: Վերլուծութեան են ենթարկուել հսկայական արխիւներ:

Խօսքը պատմական եղելութեան մասին է, որն ապացուցուած է հազարաւոր փաստերով: Այսօր այս հարցում ՀՀ-ի քաղաքականութիւնը ճիշդ բանաձեւի մէջ է: Մենք ձգտում ենք ենք Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչմանը, սակայն նախապայման չենք դնում թուրքիայի առաջ, որը ցեղասպանութիւն իրականացրած Օսմանեան կայսրութեան իրաւաւորըն է:

- Ձեր կարծիքով ի՞նչն է պատճառը, որ թուրքիան չի ճանաչում Հայոց ցեղասպանութիւնը:

- Թուրքական քաղաքականութիւնը չի հաշտուում այն մտքի հետ, որ իր կշռի երկիրը կարող է ընկրկել փոքր երկրի առաջ: Թուրքիան իր առաջ ունի Գերմանիայի օրինակը: Դա որեւէ կերպ կարող է նպաստել թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչմանը:

- Գերմանիան պատերազմ էր անցել, եւ բոլորը գիտէին նրա մեղքը: Հայոց ցեղասպանութեան ճանաչումը թուրքիայի համար առաւել վտանգաւոր է, եթէ Հայոց ցեղասպանութեան պատմական եղելութեան ճանաչումը ստանայ միջազգային արձագանք, առաւել եւս, եթէ այն սպրդի թուրքիայի սահմաններից դուրս եւ թուրքիայի քաղաքացիները սկսեն քննարկել այն, ապա այն կը վերածուի ազգային անվտանգութեան լրջագոյն հիմնախնդրի: Պատահական չէ, որ թուրքիայի անվտանգութեան խորհուրդը, որպէս երկրի կարեւորագոյն մարտահրաւէր դիտում է Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը: Այն փլուզող դեր ունի թուրքիայի համար:

Այսօր թուրքիայի համար ամենավտանգաւոր դէմքերից մէկը՝ թուրք պատմաբան Թաներ Աբչամն իր վերջին գրքում՝ «Ամօթալի գործողութիւն»-ում դատաւարտում է Հայոց ցեղասպանութիւնը, որն ուղղակի հարուածում է թուրքիայի պետականութեանը, ինքնութեանը: Թուրքիայի պետա-



Հայոց ցեղասպանութեան թանգարան տնօրէն Հայկ Դեմոյեան

կանութիւնը, ինքնութիւնը խարսխուած է Հայոց ցեղասպանութեան վրայ: Թուրքիայի վերնախաւն այն մարդիկ էին, ովքեր զբաղուել էին հայերի ցեղասպանութեամբ եւ հայերի սեփականութեան առգրաւմամբ: Պատասխանատուութիւնից խուսափելու համար նրանք յարեցին Աթաթուրքին եւ դա որակեցին՝ ազգային ազատագրական շարժում: Եթէ թուրքական պատմութեան շինարարութեան ամբողջ կոնցեպցիան բացուի, ապա մի ամբողջ երկիր կ'արժեզրկուի: Կա նախադէպ՝ ԽՍՀՄ-ի փլուզումից յետոյ 1-2 տարուայ ընթացքում, ամբողջ արժէքային համալիրը, մարդ-սիմվոլները ենթարկուեցին ծաղրի, վերանայման եւ դատաւարտուեցին: Թուրքիան վախենում է հենց դրանից:

- Եթէ թուրքիայում ամէն ինչ ԽՍՀՄ-ի սցենարով է զարգանում, ապա արժէքային համակարգի փլուզումը անխուսափելի չէ՞ եւ ընդամենը ժամանակի խնդիր:

- Խնդիրն այն է, որ թուրքիան չի գիտակցում, որ իր ստեղծած արժէքային համակարգի փլուզումը որքան դանդաղում է, այնքան վնասը մեծանում է: Թուրքիայի այն պնդումը, թէ Հայոց ցեղասպանութեան հարցի քննարկումը պէտք է թողնել պատմաբաններին՝ միամտութիւն է: Ես կարեւորում եմ պատմաբանների քննարկումը, սակայն դա առաջին հերթին անհրաժեշտ է թուրք պատմաբաններին, որպէսզի նրանք, ովքեր չզիտեն կամ միտումնաւոր չեն ցանկանում «իմանալ» իրենց պատմութիւնը, հասու լինել եւ իրենց հասարակութեանը ներկայացնել իրականութիւնը: Տաբուները յաւերժ չեն, եւ 21-րդ դարում դրանք հնարաւոր չէ պարտակել: Թուրքիայի պարագայում մի ինտերնետ կայք փակելով, լրագրողի սպանելով, պատմաբանի քրէական հետապնդման ենթարկելով՝ հնարաւոր է միայն որոշ ժամանակ լռեցնել կամ դանդաղեցնել հասարակական երկխօսութիւնը: Ես վստահ եմ, որ այդ երկխօսութիւնը ուշ թէ՛ շուտ լինելու է, եւ դա լրջօրէն վտանգում է թուրքիայի քաղաքական վերնախաւի շահերը:

- Այդ երկխօսութեան նոյնիսկ դանդաղեցման դէպքում, ե՞րբ կարող է սկսուել:

- Դա կախուած է թուրքիայի զարգացման ներքին սպեցիֆիկայից՝ ովքեր են երկրի ղեկին, ինչպիսի տեղաշարժեր են լինում: Այսօր թուրքիայում մեծ թափ է առնում հակամերիկանիզմը,

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

Ապրիլ 24 է կրկին, 92րդը այս տարի: Անգամ մը եւս հայ ժողովուրդը, ուր որ ալ գտնուի, պատշաճ եւ տպաւորիչ կերպով պիտի նշէ եւ յարգէ յիշատակը անոնց որոնք զոհ գացին 20րդ դարու առաջին պետականօրէն կազմակերպուած ցեղասպանութեան: Մեզի, հայերու համար, ոչ մէկ տարակոյս, ոչ մէկ կասկած, եւ առարկելի ոչ մէկ փաստ՝ ոճիրի իրականութեան, եւ անոր պատճառած մարդկային, տնտեսական, հողային, մշակութային, հոգեբանական եւ այլ վնասներու: Անոնք որոնք կ'ուզեն ուրանալ ցեղասպանութեան իրողութիւնը, գլխաւորաբար թուրքը, կրնան միայն կոչ ուղղել, շարունակաբար, պատմական նոր փաստերու կամ պատմաբաններու վկայութեանց, ճշմարտութիւնը անգամ մը եւս փաստելու: Ահաւոր ոճիրին ականատեսներէն մինչեւ միայնակներն դիտող, պատմաբան եւ իրազեկ անձեր չեն վարանիր, ինչպէս նաեւ բազմաթիւ պետութիւններ չեն կասկածիւ եղածը ցեղասպանութիւն կոչելու:

Շիտակ է որ «Ցեղասպանութիւն» նկարագրութիւնը, հայ ժողովուրդի 1915ի եւ անոր հետեւող ջարդերուն, պաշտօնապէս ՄԱԿի կողմէ պիտի ընդունուէր 1948ին, Ռաֆայէլ Լեմբիի բանաձեւով, սակայն թուրք կառավարութիւնը, հայաջինջ իր ծրագրերը քաղաքականութիւնը պիտի սկսէր 1915էն շատ առաջ, 19րդ դարու 2րդ կէսերէն սկսեալ: Յետագարձ ակնարկով մը, եթէ Լեմբիի բանաձեւով որդեգրուէր ՄԱԿի կողմէ, եւ պատշաճ ձևով ընդունուէր ու հատուցումներ ըլլային հայկական եւ անմիջապէս անոր յաջորդող գերմանական «հօլոքոստ»ին, հաւանաբար կրնային խնայել Ռուսոյն ապրիլի մէջ տեղի ունեցող Տարփուրեան ցեղասպանութիւնները: Չարմանալի եւ հետաքրքրական երեւոյթը այն է որ վերոյիշեալ ցեղասպանութիւններու նկատմամբ, կարելի չէ եղած ընդունական, միանշանակ վերաբերմունք ցուցադրել ինդոնեզիա ժողովուրդներէ եւ միջազգային հանրային կարծիքի կողմէ:

Այսպէս, սկսելով հայկական ցեղասպանութեան վիճակուած ճակատագրէն, կարելի է ըսել որ 20րդ դարու այդ առաջին ահաւոր ոճիրը տակաւին կը սպասէ իր ճանաչումին եւ հատուցման՝ նիւթական եւ հողային իր բովանդակութեամբ: Ոճիրը ծրագրող, իրագործող Օսմանեան կայսրութեան յաջորդող այսօրուայ թուրքիան, տակաւին կը շարունակէ

ուրանալ կատարուած ցեղասպանութիւնը եւ քանի տարիները կ'անցնին եւ հայ ժողովուրդի պահանջատիրութեան կը ձայնակցին բազմաթիւ կառավարութիւններ, այնքան անդրդրուելի կը մնայ թրքական հակադարձը, եւ ոչ մէկ տրամադրութիւն ցոյց կու տայ իրողութիւնները իրենց իսկական անունով եւ տարողութեամբ ճանչնալ: Աւելին, պետական իր լայն միջոցները, ինչպէս նաեւ դիւանագիտական իր բոլոր կարելիութիւնները կ'օգտագործէ իր ուրացման քաղաքականութիւնը յառաջ տանելու: Թէեւ թաւալող տասնամեակներու ընթացքին, թուրք մտաւորականութեան որոշ ներկայացուցիչներ քաջութիւնը կ'ունենան եղածը դատապարտելու, սակայն պետական եւ ժողովրդական շրջանակներ կը շարունակեն մնալ ուրացողի դերին մէջ: Վկայ քանի մը ամիսներ առաջ Հրանդ Տինքի պատմութիւնը, եւ թուրք իշխանութեան պատասխանատուներու, վարչապետէն մինչեւ արտաքին գործերու եւ մշակութիւն նախարարները, կատաղի հակապետականութիւնը, ցեղասպանութեան ճանաչման դէմ: Այս է մինչեւ այսօր թուրքին վերաբերմունքը հայ ժողովուրդի վրայ գործադրուած ոճիրի նկատմամբ: Եղածը, թուրքին համար, քանի մը 100 հայերու վիճակուած տխուր ճակատագիրն է, պատերազմի պայմաններու բերումով: Եթէ թուրքը շարունակէ մնալ իր այս դիրքին մէջ, երբեք թող չակնկալէ որեւէ «մեղմացում» հայերու կողմէ, ինչ մակարդակի վրայ ալ դրսեւորուի անիկա:

Տարբեր էր հրէական «հօլոքոստին» վիճակուած ճակատագիրը, վեց միլիոն հրէաներու բնաջնջման փորձէն ետք: Գերմանները, իրենց ղեկավարներու իսկ առաջնորդութեամբ, Ատրնաուրէն մինչեւ Հելսինկի Քոնգրէսին, ինչպէս նաեւ ժողովրդային մասաներու մօտ ստեղծուած հոգեբանութեան լոյսին տակ, ցեղասպանութեան կարճ ժամանակ մը ետք, ճանչցան իրենց սխալը, հատուցում կատարեցին, եւ եղածը նետեցին պատմութեան գիրկը: Օշվիցի, Պրոկըն Պիլսընի, Պուլսըն Վալտի ոճիրները գերման ժողովուրդին համար նկատուեցան, հակառակ «վերջնական լուծումի» մը փնտտութեան, պարզապէս պատմական լուրջ սպառնալիք մը, եւ ամէն ճիգ թափեցին «իրենք զիրենք ազատագրելու»: Հիթլերեան Գերմանիոյ յաճախանքէն: Բացի հատուցումէն, ճանաչումէն ետք, գերմանները յուշարձաններ կառուցեցին Պերլինի եւ այլ վայրերու մէջ, ի յիշատակ գործուած մեղանշումին: Որքա՞ն

տարբեր էր գերման ժողովուրդի վերաբերմունքը ի տես թուրք պետութեան եւ ժողովուրդին: Մինչ հրէական ցեղասպանութիւնը տակաւ կը ստանայ պատմական եղելութեան մը պարզ յիշատակութեան արժանի հանգամանքը, ոճիրը գործադրողի եւ ողհին միջեւ տեղի կ'ունենայ հետաքրքրական զարգացում մը, Գերմանիան իր անցեալը կը դիտէ իբրեւ հիթլերական նացիզմի զոհը, նոյնիսկ եթէ հօլոքոստի յուշարձանի մը կառուցման երեւոյթը եւ ծրագիրը չփոթի մասնէ զինք:

Պատասխանատուութեան հարցին մէջ, թուրքերու պարագային, սովոր ենք ըսելու որ հրէային ծրագրի յղացող-գործադրողները ճեմալ-թախաթ-էնվեր տխուհուհուհու երեւակն էր, երիտասարդ թուրքերու կուսակցութեան գաղափարախօսուեան տակ, որ կ'արտայայտուէր իբրեւ «թրքութիւն»: Այդ օրերու ամենէն զարգացած թուրքն իսկ, ամէն ինչ կը գոհէր իր թրքութեան սիրոյն: Գերմաններու պարագային, նոյնիսկ եթէ «գերմանականութիւնը» գերադաս նկատուէր, յանցանքը կը վերագրուէր վրիպած գաղափարական հոսանքի մը, նացիզմի պատմական սխալին: Թուրքի պարագային, ոճրագործները ծանօթ էին եւ անոնք մասամբ մը ստացան իրենց արդար պատիժը: Գերմանիոյ պարագային, Հիթլերի անձնասպանութեան էտք, նոյնիսկ եթէ դատուողներ եղան, ամբողջ գերման ժողովուրդը ինզքզինք յանցաւոր զգաց:

Կը հասնինք 1994 թուականին: Հայկական եւ հրէական ցեղասպանութիւններէն ետք, տեղի ունեցան յաջորդաբար կամ գուզահեռաբար ուռանտական, գամպոտական, եւ տարփուրեան ցեղասպանութիւնները: Ռուսաստանի մէջ տեղի ունեցած ահաւոր ցեղասպանութիւնը, որու ընթացքին մէկ միլիոնէ աւելի մարդիկ զոհ գացին Հոկտեմբեր-թուրքի հակառակութեան, տեղի ունեցաւ միջազգային ընդհանուր անտարբերութեան տրամադրութեան մէջ: Թուրքերը նոյնիսկ ներկայիս կը փորձեն խափանել, ՄԱԿի շրջանակէն ներս, անոր 13րդ տարեդարձի նշումը, առարկելով որ անոր կազմակերպութեան պատասխանատուները նշած էին հայոց ցեղասպանութեան դէպքը: Հոս հետաքրքրական դրուագի մը հանդիպեցանք, ամերիկացի լրագրողի մը Ռուսաստանի ջարդին նկարագրութեան ընթացքին: Ամերիկացի լրագրողը, իր պրպտումներու ընթացքին, կը հանդիպի ամերիկացի լրտեսական ցանցի մը պատասխանատուին, որ իրեն հետաքրքրական հարցում մը կ'ուղղէ.

«Դու գիտես ի՞նչ կը նշանակէ

ցեղասպանութիւն բառը»: Լրագրողը կ'ուզէ իրմէ լսել բացատրութիւնը: Ամերիկացի լրտեսը, իրեն պատասխանելով, հետեւեալը կ'ըսէ.

«Պանիրի սանտուիչ մըն է: Արձանագրէ մօտը: Ցեղասպանութիւնը պանիրի սանտուիչ մըն է»: Իր կարգին, լրագրողը բացատրութիւն կ'ուզէ: Ամերիկացի լրտեսը, իրեն դառնալով կը նկարագրէ հետեւեալը.

«Ո՞վ կը մտահոգուի պանիրի սանտուիչով, տարի մը ետք: Ցեղասպանութիւն, ցեղասպանութիւն, ցեղասպանութիւն: Պանիրի սանտուիչ, պանիրի սանտուիչ, պանիրի սանտուիչ: Որո՞ւն հոգն է, Մարդկութեան դէմ ոճիր, ո՞ւր է մարդկութիւնը: Ի՞նչ է մարդկութիւնը: Դո՞ւն: Ե՞ս: Դուն ականատես եղա՞ծ ես քեզի դէմ գործուած ոճիրի մը: Պարզապէս մէկ միլիոն ուռանտացի մեռած է: Յետոյ ի՞նչ: Դուն լսա՞ծ ես ցեղասպանութեան վերաբերեալ պայմանագրութեան մասին - (ակնարկութիւնը կ'երթայ ՄԱԿէն ներս որդեգրուած պայմանագրութեան)»: Լրագրողը կը պատասխանէ այս: «Ան ընդունուած էր ՄԱԿէն 1948 թուականին, Նիուրընպրկի դատավարութեան էտք: Բազմաթիւ երկիրներ ալ ստորագրած են այդ երկիրները կը խոստանան ցեղասպանութիւնը արգիլել եւ զայն գործադրողները պատժել եթէ կրկնուի»: Հետաքրքրական կ'ըլլայ ամերիկացի պաշտօնեային պատասխանը. «Այդ ցեղասպանութեան պայմանագիրը լաւապէս օգտակար կ'ըլլայ պանիրի սանտուիչը փաթեթելու»: Այսպէս ուրեմն, ամերիկացիին համար, Ռուսաստան եղած մէկ միլիոն թուրքներու ջարդը պէտք չէ «ցեղասպանութիւն» կոչել: Այսպէս կը մտածէր այդ օրերու Գլինթընի իշխանութիւնը եւ յատուկ ցուցմունքներ տուած էր որպէսզի եղածը «ցեղասպանութիւն» չճանցուի: Մտածողութիւնը այն էր որ «Եթէ ցեղասպան արարքներ կրնան գործուած ըլլալ, սակայն ցեղասպանութիւն բառին գործածութիւնը «ըստ Ամերիկայի պետական բաժանմունքին (State Department) «որոշ պարտաւորութիւններ կրնան ծնիլ եւ ուրեմն պէտք է խուսափիլ այդ բառը գործածելէ: Ի՞նչ պատաւորութեանց մասին է խօսքը: Այդ օրերուն, Ռուսաստանի ցեղասպանութիւնը կասեցնելու համար, ըստ ՄԱԿի զինուորներու հրամատարին, որ քանատացի մըն էր, անհրաժեշտ էր շուրջ 5-8 հազար զօրք դրկել: Փոխանակ այս թիւը գոյացնելով ցեղասպանութիւնը արգիլելու, ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը, գոր-

Շարք էջ 16

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Now Available RightPlan PPO 40

Featuring PlanScape® Keeping Californians Covered...

The Power of Blue SM

Health coverage for every household member and every household budget.

Affordable plans for the whole family. SM

Blue Cross of California and BC Life & Health Insurance Company are independent licensees of the Blue Cross Association. The Blue Cross name and symbol are registered service marks of the Blue Cross Association.

ԱՆՔՐԱԺԵՇՏ Է

1975-2005

30th ANNIVERSARY

A.B.A. INSURANCE SERVICES

BEDROS SIAMANTO MARONIAN

818-500-9585 805 East Broadway, Glendale, CA 91205

ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"

AUTHORIZED AGENT FOR BLUE CROSS OF CALIFORNIA LIC. # 0494056

Blue Cross of California

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ ԱՌ ԿԼԱՏԹԱԹՕՆ

ԽՍԲ. ԾՆԹ.

Հակառակ անոր որ աւելի քան 112 տարիներ անցած են Խիրմեան Հայրիկի այս ցամակի գրութեան թուականէն, բայց եւ այնպէս հոն արտայայտուած կարծիքներն ու մտահոգութիւնները չեն կորսնցուցած իրենց այժմեականութիւնը: Ուստի իր շահեկանութեան համար կը հրատարակենք զանկալ՝ ուղղուած Մեծն Բրիտանիոյ նշանաւոր վարչապետներէն՝ Ուիլիըմ Կլաթստոնի: Մեր ընթերցողները ծանօթ պիտի ըլլան «ծառայել հայութեան կը նշանակէ ծառայել քաղաքակրթութեան» խօսքին, որ արտասանուած է Կլաթստոնի կողմէ: Ան 4 անգամ վարած է վարչապետական պաշտօնը, վերջինը 1892-1894:

Մեծանուն Տէ՛ր,

Ես չեմ կարծում որ չիշէք աստի իբր 17 տարի առաջ, երբ Պուլկարիոյ գերութեան շղթայն ջախջախուեցաւ եւ տէրութեանց համաձայնութեամբ ի Պերլին վեհաժողովն սկսեց, ես յայնժամ մի նամակ գրեցի Ձերդ Մեծութեան, խնդրելով որ պաշտպան հանդիսանաք նաեւ չարչարեալ Հայոց ազգին, որպէս Պուլկարիոյ:


Ինձ յայնժամ վիճակեցաւ ի դիմաց Թուրքիոյ Հայոց ազգին եւ Տէր Ներսէս Պատրիարքին պատգամաւոր լինել, որով դեղերեցայ ես առ դրունս Եւրոպիոյ տէրութեանց: Եւ ի սկզբան մեծ հաւատով Մեծին Անգլիոյ դուռը բաղխեցի եւ անտի երթալով ի Պերլին, մատուցի մի կարեւոր Յիշատակարան վեհաժողովին, որոյ հետեւանքն եղեւ ճիշդ Յօդուածին:

Իսկ այդ Յօդուածն, գիտե՞ս Տէր, ի՞նչ հետեւանք եւ արդիւնք ունեցաւ: Դա շատ յայտնի է աշխարհին որ պատուհաս եղաւ խեղճ Հայոց ազգի գլխուն: Ձի այն օրէն սկսեց տաճկական կառավարութիւն իւր ձեռք ծանրացնել Հայոց աշխարհին վրայ, տակաւ տակաւ բռնութեան միջոցներով եւ գաղտնի հրահանգներով, իւր աւերիչ ու քանդիչ պաշտօնեաներուն ձեռքով ճնշեց հայ ժողովուրդը եւ ճմլեց այնպէս, ինչպէս խաղողն ի հնձանին: Նա մտաբերեց ու ասաց. Ես սորվեցայ Պուլկարիոյ փորձէն, գիտեմ այժմ թէ ի՞նչ պիտի անեմ: Ուստի վճռեց՝ թէ պէտք է հայութիւն ջնջեմ Հայաստանէն: Սորա համար թոյլ տուաւ որ կուսակալներ Փարաւոնի խտտարտութեամբ ջնջեն, դատաւորներ օրէնքով ջնջեն, ոստիակներ գրպարտելով ջնջեն, հարկահաններ ծանր ծանր հարկերով ջնջեն, վայրագ բարբարիկ քրդեր իւրեանց սովորական աւարառութեամբ ջնջեն:

Միթէ չգիտե՞ք, որ քանի տարիներ յառաջ Ձէքի փաշայի խորհրդով Սուլթան՝ քրդաց պէյքեր ի Պոլիս կանչելով Համիտիյէ անունով մի հեծելազունը կազմեց, փաշայութեան աստիճաններ տալով քաջալերեց եւ բարձրացուց վայրենի քիւրտին արժանիքը, առ երեսոյթ ցոյց տալով Եւրոպիոյ քաղաքակրթութեան, թէ ես ահա՛ բարբարոս կարծուած քիւրտերն գինուորական կարգին ու շրջանակին մէջ առնելով, պիտի կրթեմ՝ որ թողուն իրենց վայրենութիւն եւ իբրեւ օրինապահ գինուոր ծառայեն տէրութեան եւ երկրին: Թոյլ տուաւ այնուհետեւ որ նոքա դառնան իրենց տեղերին: Մենք գիտենք փորձով քիւրտին վախցող եւ զգոյշ բնաւորութիւն: Միթէ կարելի՞ է հաւատալ՝ որ քիւրտ այնքան երես առնելով, համարձակէր յայտնապէս յարձակիլ Հայոց գիւղերու անգէն, անօգնական մշակ ժողովուրդին վրայ, անխնայ կերպով կողոպտելով եւ սպաննելով: Մեզ եւ աշխարհին շատ յայտնի է, քիւրտ ինչ ո գործեց Հայաստանի մէջ, թելադրիչ հրահանգով գործեց: Մանաւանդ երբ պարագաներէն տե-

ղեկացաւ քիւրտ թէ հայ ազգ Սուլթանի աչքէն ինկած է, տե՛ս դու յայնժամ թէ քիւրտ ազգ ո՞րչափ անկասկած կը խիզախէ իւր չարաչար աւերածութեան մէջ: Եւ ինչու համար արդեօք տեղական կառավարութեանց կողմէն առանց երբեք պաշտպանութեան հայ գիւղական ժողովուրդը քիւրտին կամայականառութեան մատնուեցաւ: Դորա պատճառ շատ յայտնի են մեզ եւ աշխարհին առաջ: Վասնզի կառավարութիւն մի խորամանկ քաղաքականութիւն հնարեց եւ յաջողեցաւ քիւրտին ձեռքով այնչափ բազմաթիւ գիւղացի հայ ժողովուրդ իրենց բնիկ բազմադարեան հայրենիքէն հանել, վարել դուրս գունդագունդ հայ գաղթականներ, եւ յետոյ չքմեղս լինելով ասել, թէ քիւրտն արաց: Եւ այսպէս երկիր դատարկելով հայութենէն իրաւունք ունենալ ասել, թէ այլեւս չիք հայ ու Հայաստան, կորուսած է հայն իւր բազմաւորական թիւ եւ նշանակութիւն:

Հայեր ինքնապաշտպանութեան կռուի ելան: Ազատագրական շարժումները ղեկավարող հայդուկային ջոկատներ, ֆիտալական խմբեր կազմեցին: Հայ քաջեր՝ Արաբօ, Աղբիւր Սերոբ, Գորգ Չաւուշ, Անդրանիկ, Նիկոլ Դուման, Դժոխք Հրայր, Մուրատ, Տմատեան, Համազասպ այդ խմբերին կռուի տարան թուրքի բանակի ու քրիւրտ աւագակների դէմ: Հայեր գէնք էին չափում՝ ժողովրդական գինուած ապստամբութեան միջոցով ազատագրելու երկիրն իրենց: Սակայն կռիւն էր անհաւասար, զարկին, զարնուեցան, պարտուեցին, առանձին խմբերի փոխարէն չկարողացան համընդհանուր ապստամբութիւն իրականացնել, թշնամին պետութիւնն էր:

1908 թուական, իրենց Երիտասարդ թուրքեր անուանած թրքացած հրեաների, թրքացած գնչուների մի հրէշածին հրոսակախումբ, ապստամբութեան դրօշ պարզեց, գահընկեց արեց սուլթանին եւ երկրում սահմանադրական միապետութեան կարգեր հաստատեց: Ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն էին քարոզում: Հայեր հաւատացին թուրքին, հաւատացին որ կ'ազատագրուէին սուլթանի հալածանքներից, չէին կարողացել ըմբռնել քաղաքական նոր իրավիճակը, կարծում էին այդ կարգախօսը իրաւահաւասար-

րութիւն կը բերէր հայերին: Աստղածին Անդրանիկը չհաւատաց թուրքին, զոտչացրել էր հայ գործիչներին որ իթթիհատը ոչնչացնելու էր իրենց ու հայ ազգին: Եւ 1909 թ. երիտթուրքերը իրենց իշխանութիւն գալու առաջին տարեկիցը նշեցին Ատանայի երեսուն հազար հայերի կոտորածով:

1912 թուականի Թեսալիսիկէի ժողով, այդտեղ էին իթթիհատականները ծրագրել Անատոլիայում, Արեւմտեան Հայաստան, բնաջնջել հայերին, տեղահանել, տարագրել նրանց: Ժողովին մասնակցած ժողովրդական կուսակցութեան մի ներկայացուցիչ տեղեակ էր պահել Հիւսիսային հայկականները երբեք չէին գործակցել թուրքի հետ, որի համար արգելուած էր եղել երկրում իրենց գործունէութիւնը: 1913 թուականին Ռուսաստան-Կոնստանդնուպոլսում կայացած իրենց համագումարում, որոշում էին ընդունել ահաբեկել իթթիհատի ղեկավարներին, որի գործադրումը յանձնարարել էին իրականացնելու մարկածին Մեղրեցի Փարմազին: Պոլսում գաղտնի ժողովի ժամանակ հայու մասնութեամբ կալանուել էին ու մահապատժի ենթարկուել:

Հայեր, պահանջեցէք ասում էր ոչ միայն թուրքից, այլ նաեւ Եւրոպայից՝ Ֆրանսա, Անգլիա, Գերմանիա, Աւստրիա, որոնց դիւանագէտների խարդալանանքներով ու նրանց թողուութեամբ արեւելքում հազար-հազար դարերի մի ցեղ էին սպաննել: Հիմա դարձեալ նրանց դուներն ենք բախում, որ իրենց խորհրդարաններում ընդունեն այն՝ ինչ որ իրենց դժխեմ մեղսակցութեամբ Արատտա-Հայասա-Արարատեան թագաւորութիւն-Հայաստան երկրում է պատահել, իրենց իսկ ցեղակից Հնդեւրոպական արիւցիներին, որի լեռնաշխարհից գնացել հասել էին մինչեւ հեռու ծովեր ու ովկիաններ: Աշխարհի 192 պետութիւններից այժմ միայն 21ի խորհրդարանների արդարամի, իրենց հոգիներում ճշմարտութեան դաւանանքի լոյս կալած այրեր ասել են որ ցեղ են սպաննել: Ուրիշներ դողում են թուրքի պոռոտագոռ սպանալիքներից: Ասում են այն ժամանակ «ցեղասպանութիւն» սահմանում չէր եղել: Սակայն հրեայ Լեմբինի խմբագրութեամբ ընդունուած միջազգային պայմանագրոյթի պահանջները ինչու են այդ թուականից առաջ կատարուած հրէական շոքոքոյթի դէպքերը համարել ցեղասպանութիւն եւ ինչու որ հայկական լեռնաշխարհում կատարուածին: Հիմա, «հարա-հրոցով» որտեղ մի քանի մարդ են սպաննուում՝ Պոսնիա, Քոսովո, Տարֆուր ցեղասպանութիւն է ասում են:

Չէ, այդ եւրոպացիների դիւաններում հազար-հազար վաւերագրեր կան, նրանք այն կարդացել են, նրանք բոլորը համոզուած են ինչէ կատարուել: Ուր են հիմա այդ լեռնաշխարհի միլիոնաւոր արիւցիները, ով է պատարագում նրանց տաճարներում, ով է արտերում հորովելներ կանչում: Միայն ցեղասպանութեան իրողութեան ճանաչման դիմելու ժամանակը արդեօք չի հատել: Հայը պահանջատիրութեան իր դատն ունի, հատուցում՝ իր նախնիների լեռները, նրանց խոնջանքի քրտինքով, նրանց արեամբ յեռած հողն է ուզում, որ մայրացնի ցորեանի արտերով ու սպարնէզներով, այնտեղ փրկուած պարտներն է ուզում: Ազդարարել նրանց, որ պատասխանատու են իրենց արիւ-

կան ցեղակիցների հանդէպ գործադրուած տառապանքին, նրանց երագները ճրագները լոյսի մարման, նրանց մանչերի ցաւին: Դեռ հազարամեակներ ատաջ այդ լեռնաշխարհում ծաղկած է եղել քաղաքակրթութիւն, միջնադարեան մշակույթ, վերածնունդ, որտեղից ճառագայթում են Քրիստոնէական բարոյականութեան ազնիւ դրսեւորումներ, որ հիմա այն Եւրոպական են կոչում:

Հարիւր հազարներով, իրենց կանանցով, իրենց արջառով, Ասիայի տափաստաններից սեղծուք թուրքեր արշաւել էին արեւմտեան կողմի շէներ, այլեւ ճանապարհն իրենց, հասել աստղաւառը Բիւզանդի քաղաք, փլել այն: Պատնէլ էին հայոց լեռնաշխարհը, այն կղզիացած մնացել է արեւելքում, անջատուած հիմա եւրոպական կոչուած քաղաքակրթութիւնից: Պահանջել Եւրոպայից իրենց արիական լեռնաշխարհից մի փշուր մնացած երկիրը միացնել իրենց ստեղծած նոր միութեանը՝ Եւրոմիութեանը: Հազար տանջեցին մինչեւ իրենց միութեան խորհրդարանական վեհաժողովին մասնակցիւելու ընդունեցին, այն էլ երկար ժամանակ պայմանաւորով կովկասեան թաթարների հռչակած Ատրպէյջան ապօրինի անուանով կոչուած պետութեան ընդունման հետ: Նրանք, թուրքիան անհարիր են Եւրոպական քաղաքակրթութեանը, Եւրոպան Քրիստոնէայ Միութիւն է, Քրիստինէական քաղաքակրթութեան մշակույթով: Պահանջել հիմա նրանցից, իրենց մեղքի մի փշուրի հատուցում, որ բացեն իրենց դարպասները եւ դարձեալ գրկախառնուեն իրենց բնօրրան երկրի՝ դաշնակից Հայաստանի հետ: Այն մի մասնիկն է եղել Եւրոպայից, Հայաստանը Հռոմիէական ու նրանց ժառանգորդ Բիւզանդական կայսրութիւնների դրացի դաշնակիցն է եղել, հոգ չէ թէ հիմա տարանջատուած, ով իմանայ պատմութիւնը ինչպէս կը կրկնի իրեն:

Խոստովանեցին: Անգլիայի քաղաքական ակնաւու դէմքերից՝ Լլոյս ձորճը, որը իր քաղաքական ասպարէզում ոչ քիչ անգամ էր հայկական հարցը գոհաբերել իրենց շահերին, յետագայում իր յուշերում՝ պիտի գրէր՝

«Եթէ չլիներ մեր չարաբաստիկ միջամտութիւնը, ապա հայերի մեծամասնութիւնը տակաւին 1878 թ. Սան Ստեֆանոյի պայմանագրով կ'անցնէր ռուսական դրօշի պաշտպանութեան տակ: Հայաստանը մեր գոհն է, որ նա գոհաբերուեց մեր կողմից կերտած յաղթանակի գոհասեղանին: Ռուսները ստիպուած էին հեռանալ, դժբախտ հայերը նորից ճգմուեցին իրենց հին կեղեքողների կռուակների տակ: Բրիտանական կառավարութեան քաղաքականութիւնը ճակատագրական անխուսափելիութեամբ հանգեցրեց 1895-1897 եւ 1909 թուականների սարսափելի սպանդներին եւ 1915 թուականի զարհուրելի կոտորածին: Հենց մենք սուսինք թուրքերին հնարաւորութիւն իրագործելու այդ ոճրագործութիւնը»: Ահա նրանց ուշացած, սակայն ճշմարտացի խոստովանութիւնը: Եւ այժմ մարդկային իրաւունքներ քարոզող Եւրոպան, մեղքերի թողութիւն պէտք է հայցի ոչ թէ տաճարներում, այլ իրենց խորհրդարաններում, որ ցեղ են սպաննել, որ ետ տան նրանց փրկուած տաճարները, հայրենի հողը եւ այն իրենց ափերի վրայ պահած լեռները:

Երբ Աստուած խղճահարու-

ԱՊՐԻԼ 24

ԻԶՄԻՐԻ ԶԱՐԴԸ
ՏԱՍՆՄԵԿ ԸԱԶԱՐ ԸԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ
ՆԱԸՏԱԿՈՒԹԻՒՆԸ

ՎԱՐԴԱՆ Ա. ՔԶՆՅ. ՏԻԻԼԿԵՐԵԱՆ

«ԱՅՍՓԱՆ ԶԱՐԻՔ, ԹԻ ՄՈՒԱՆԱՆ ՄԵՐ ՈՐԴԻՔ, ԹՈՂ ՈՂԶ ԱՇԽԱՐՀ ՀԱՅԻՆ ԿԱՐԴԱՅ ՆԱԽԱՏԻՆՔ»

Աւետիս Աւարտեան

Վեցամեայ տարիքէն մինչեւ տասներկու տարեկան, մանկութեանս աչքերէն չսքողուեցան Եղեռնի ու Իգմիրի հայկական կոտորածներու արիւնայի տեսարանները:

Մահուան ուրուականը, օրուան բոլոր ժամերուն մեր շուրջը կը յածէր եւ մէնք անձկութեամբ կը սպասէինք մեր սարսափազդու վախճանին:

Թուրք պետութեան մերօրեայ պարագլուխները, որ հարագատ շառավիղներն են հայաջինջ ցեղասպանութեան նգովեալ հեղինակներուն, ի գուր կը պայքարին անհերքելի ճշմարտութիւնը հերքելու, որ իրենց գործած գեհնային ոճիրը, աշխարհաճանաչ չդառնայ:

Աշխարհի ոչ մէկ ժողովուրդի պատմութեան էջերուն մէջ չէք գտնուիր արձանագրութիւն մը, որ մասգործի դանակներով բնաջնջ իր երկրին հաւատարիմ փոքրամասնութիւնները:

Օրը շաբաթ էր, Ապրիլ 1922:

Զատիկը տօնելու տենդոտ պատրաստութեան՝ կենսուրախ օրեր էին: Երբ գեհնահերկաթէ դարպասները բացուեցան ու երկրի խաւարակուռ ընդերքներէն դուրս խոյեցան, սատանաներէն ավելի չար՝ մարդակերպ ճիւղներ, գինուած բահերով ու բրինձներով, լախտերով ու մահակներով, կացիններով ու մարդործի դանակներով, ջարդելու եւ սրածելու անպաշտպան հայութիւնը, որ Իգմիրի ծաղկեալ ու բարգաւաճ գաղութը կը բարացուցէր:

Յունական գործը, չարաչար պարտուած՝ խուճապահար կը նահանջէր ու ետեւ կը թողուր քաղաքին քրիստոնեայ բնակչութիւնը, որ թուրք բանակը եւ խուճանը ազատօրէն կատարել իրենց անագորոյն խժոճութիւնները եւ խոշտանգումները:

Հայոց թաղերէն անցան ֆետալիներու ձիւտը ջոկատը, պատուիրելով, որ դռները փակենք եւ տունէն դուրս չ'ելլենք:

Հրացանակիր հայ երիտասարդութիւնը եւ չափահաս մարդիկ, թաղին փողոցներուն անկիւղները դիրքաւորուած, պատրաստ էին պաշտպանելու հայութիւնը խուճանին հարձակումներէն:

Այդ եղերաբախտ հայրդիները, առաջին նահատակները եղան եւ թոպամահ ջարդուեցան, առանց փամփուշտ մը կրակելու խուճանավար ամբոխին դէմ:

Հրեաները, որոնց վախ ու մահ չէր սպառնար, կեցած էին իրենց տուններուն առջեւ եւ մատնացոյց կ'ընէին հայոց տունները:

Օր մը առաջ, նախատեսելով վտանգը, հայերէն գատորոշելու համար, պատուհաններուն վրայ տարածեր էին իրենց աստղանիշ դրօշը: Կը գրեմ այս ականատեսի վկայութիւնները, մահուան սեւաթուր վարագոյրը չ'իջած դարամերձ կեանքիս վրայ: Կը գրեմ ճշմարտութեան վերջին բառը գործածելով, որ ոչ ոք՝ չկարենայ հերքել կամ խեղաթիւրել լոյսի մէջ բեմադրուած ցեղասպանութեան ողբերգութիւնները:

Թրքական իշխանութեան կամաւոր եւ կամակոր ուրացումները, շատ դիւրին կրնան արձագանգել թուրքերու ստավարժ ականջներուն մէջ ու ժխտել այն բոլոր անմարդկային գազանութիւնները հայ ժողովուրդին կեանքին դէմ շղթայագերծուած, որոնց ականատես եղայ պատանութեանս տարիներուն:

Հայ քահանայ մըն եմ, Աստուծոյ եւ եկեղեցւոյ անարժան ծառայողներէն մեկը, հովուական յիսնամեայ համեստ վաստակով: Աղօթեր ու ներեր եմ մեղապարտ մարդոց գործած կամայ ակամայ մեղքերը, բայց այսօր՝ ազգային խղճմտանքս թոյլ չի տար անպարտ արձակել թուրք կոշուած գեհնի գազանները, որոնք բնագրական վայրագութեամբ ջախջախեցին հայ մտաւորականութեան սքանչելի գլուխները:

Թուրք հայակեր խուճանին համար, այնքան բարենպաստ էր ժամանակը իր երկրին քրիստոնեաները ջարդելու եւ այնքան առատ էր գոհերու հունձքը մահուան աւարը բրգացնելու, որ մայրերու որովայնէն վիժած թուրք լակոտները, սովալլուկ գայլերու նման ինկեր էին դիակներու վրայ եւ կը խուզարկէին անոնց գրպանները դրամ գտնելու յոյսով:

Մեր տան դիմաց խան մը կար, ուր ձիեր կը պահուէին եւ պահապանը ծերունի հայ մըն էր: Խուճանը բռնեց եւ դուրս բերաւ գայն գանակոծելով: Երեսնակեալ պառկեցուց գետին եւ երկու մարդիկ խոշոր քար մը վերցնելով, փշրեցին անմեղ հայուն գանգը:

Մեր թաղին բոլոր երիտասարդները, տասը տարեկանէն վեր, լախտի հարուածներով նահատակուեցան իրենց մայրերուն աչքին առջեւ:

Մեր երկյարկանի տան գետնաչարկը կը բնակէին կաթողիկէ ընտանիք մը, մայր մը իր երեք զարուսամեայ գաւակներով:

Թուրք զինուորները խորտակեցին դուռը եւ դուրս բերին երիտասարդները գաւազանի հարուածներով եւ գնդակահարեցին գանոնք իրենց մօրը աչքերուն առջեւ:

Տարաբախտ մայրը կուլար ու կ'աղաղակէր,

«Պէն Ֆրանսըզ, Ֆրանսըզ վուրուլմազ, ես ֆրանսացի եմ, ֆրանսացին չեմ գարներ:

Մայրը յանկարծ նետուեցաւ գինուորներէն մէկուն վրայ, որ հրացանին կոթովը անխնայ կը հարուածէր անոնց գլուխները, որ կասեցնէր անոնց շնչառութիւնը:

Տարաբախտ կինը կը հաւատար, որ ֆրանսական հպատակութիւնը կը յարգուէր ու կը փրկէր իր կեանքը խուճանին վրիժառութենէն: Չմտածեց որ հայ էր եւ թուրքին համար արժէք չունէր հայու մը հպատակութիւնը, հերիք էր որ հայ էր անունով ու ծագումով:

Երկանիւ աղբակառքերը դիակներով բրգացած, ոմանք կիսամեռ եւ ոմանց աչքերը բաց հետեւեցան իրենց դժնետեսիլ յուղարկաւորութեան:

Ամբողջ օրը փեղկերու լուսանցքներէն դիտեցի դիակառքերու տողանցը: Արիւնը առատօրէն կը հոսէր փողոցներու երկայնքին՝ կառքերու ճեղքերէն:

Այս եւ ասոր նման սարսափազդու խժոճութիւններ, երեք օր յաջորդաբար, հայոց թաղը գուլուկներու մատնեցին: Համագիշերային

ԽՈՐԵՐ
ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԸՈՐԻՉՈՆԻՆ ԿՐԱՅ

ԼԵՆԱՄԱՆՈՒԿԵԱՆ

Ապրիլ է կրկին:

Ամէն անգամ երբ Ապրիլ 24 կը մօտենայ յետադարձ հայեացք մը կու տայ եւ մեզ կը յիշեցնէ Մեծ Եղեռնն ու արհաւիրքի դժխեմ օրերը: Մեր պատմութեան սեւ թուականը՝ ուր մեր մէկ ու կէս միլիոն քոյրերն ու եղբայները, անոնց շարքին մեր մտաւորականները՝ բոլորն ալ գոհը դարձան թուրք եպիսկոպոսին: Անոնց պատգամը եւ նահատակներուն կտակը դրոշմուած կը մնան մեր հոգիներուն մէջ:

Ամէն անգամ որ կ'ոգեկոչուի անոնց յիշատակը՝ աւելի լայն ճանաչում կը գտնէ մեր արդար դատը, որուն հետեւանքով Յեղասպանութեան համաշխարհային ճանաչումը նորանոր յաջողութիւններ կ'արձանագրէ:

Դարը փոխուած է... փոխուած են նաեւ պայմաններն ու մեր գիտակցութիւնն ու պայքարը շարունակելու մեր վճռակամութիւնը: Անխախտ է հայու հւատքը, կենսունակութիւնն ու հայրենասիրութիւնը: Հարուստ է հայը իր դարաւոր մշակոյթով ու պատմութեամբ: Հայուն գէնքը իր լեզուն է եւ քաջաբար արտայայտուելու այդ մեծ կարողութիւնը, իրականութիւնները եւ փաստերը հրամցնելով բոլոր ազգերուն: Աննկուն է հայրը:

Եկէք այսօր խոնարհինք մեր հայ ժողովուրդի միասնական ոգիին առջեւ: Արդարեւ մեր ժողովուրդի այդ միասնական ու վճռակամ ոգիին կը պարտինք մեր վերապրումն ու ցարդ արձանագրուած նուաճումները: Ապրիլեան այս օրերուն ողջ հայութիւնը կը յիշէ իր նահատակները ու կը սզայ սակայն... այլեւս գոյութիւն չունին լացն ու կոծը... Հորիզոնին վրայ ճշմարտութեան լոյսն է որ կը ճաճանչէ... Ի վերջոյ, ճշմարտութիւնը՝ լոյսն է աշխարհի...:

հրացանաձգութիւնները, ողբակոծ աղաղակները եւ համատարած հրդեհը, երկրի վրայ բերին դժոխքը խաւարակուռ տեսարաններով:

Վեցամեայ մանկութենէս մինչեւ երկոտասան տարիքս, աչքերէս չ'անջատուեցան Եղեռնի ու Իգմիրի հայկական կոտորածներու զարհուրելի բեմադրութիւններէն:

Սուրէ եւ հուրէ անցած հայուն եղերաբախտ ճակատագիրը, մէկ օրուան թուականի մը արդար չէ կապել: Նահատակաց յուշածուծը ամենօրեայ տառապալից ապրում պէտք է ըլլայ, ժամանակը եւ յավերժութիւնը ընդգրկող յիշատակի տօնակատարութիւն մը:

Եթէ երկրի ընդերքներուն մէջ ողջացած գեհնի չար ոգիները դուրս գային իրենց թաքստոցներէն, անոնց խժոճութիւնները շատ թեթեւ պիտի կշռէին նժարին վրայ, համեմատած թուրք խուճանավարներու կացինահար վայրագութիւններուն հետ:

Իգմիրի ծովափը, հորիզոնական տարածքի վրայ, գնդակահարուած հայ երիտասարդներու բազմահազար մարմինները մակոյկներու պէս կը ծփային ու կը ծեծուէին ալիքներէն:

* * *

Ամենաստակալի վախճանը ունեցաւ, յունաց համայնքին Առաջնորդ, Ոսկեբերան Եպիսկոպոս՝ Խրիստոսաթոմոս:

Շղթայակապ բերին Սուրբը Պամահանէի ընդարձակ հրապարակը եւ բարձրացուցին գինք պատուանդանի մը վրայ եւ բազմահազար թուրքերու ներկայութեան լախտերով հարուածեցին մարմինը:

Մերկացուցին գայն ամբողջ մարմնով եւ երկու սափրիչներ դանակներով սկսան խուզել իր գլուխին մազերը ու դէմքին մօրուքը:

Այս հրէշային գործողութիւնները կը կատարուէին խեղահեղ բացականչութիւններով եւ որոտընդոտ ծափերով:

Կապեցին անոր ձեռքերը եւ ոտքերը, իրարմէ անջատ չորս պարաններով եւ ըմբշեցին, բաժնելով ուսերէն բազուկները եւ կողերէն սրունքները, ու անդամահատուած մարմինը նետեցին պատուանդանէն վար:

Արիւնը ուղիսօրէն կը հոսէր եւ կը լճացնէր գետինը:

Այսպիսի սահմուկեցուցիչ մարտիրոսութիւն մը, ոչ Քրիստոս ունեցաւ, ոչ գազաններու ատամներուն մէջ բազուկները կամաւոր նահատակները, ոչ ալ Փրկչին երկոտասան աշակերտները իրենց տանջալի մահերով:

Ի՞նչպէս կարելի է հայ լեզուին բառերը սրբապղծել ու ներել դժոխածին բարբարոս ժողովուրդի մը գործած անմարդկային գազանութիւնները:

Յոյն եկեղեցին սրբացուց յիշատակը այս մեծանուն Մարտիրոսին, որ ջարդի օրերուն մնաց իր նահատակ ժողովուրդին գլուխը եւ... մարտիրոսացաւ:

Իրականք ունի հայ նահատակ ժողովուրդի վշտին մեծագոյն երգիչը, Աւետիս Ահարոնեան տաղերգելու հետագայ տողերը...դժհզհզ:

»ԱՅՍՓԱՆ ԶԱՐԻՔ, ԹԻ ՄՈՒԱՆԱՆ ՄԵՐ ՈՐԴԻՔ, ԹՈՂ ՈՂԶ ԱՇԽԱՐՀ ՀԱՅԻՆ ԿԱՐԴԱՅ ՆԱԽԱՏԻՆՔ«:

HARUT DER-TAVITIAN License #0B28270
1807 W. Glenoaks Blvd., Suite 202 Glendale, CA 91201
Tel.: 818/502-3233 Fax: 818/502-3244 Pgr.: 818/608-9898 info@excelhye.com www.excelhye.com
EXCEL HYE INSURANCE SERVICES
AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



*Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.*



AGBU HYE GEEN

Forum for Armenian Cultural
and Social Studies

&

CSULA School of Social Work
Armenian Social Work Caucus

Invite You to

THE 2ND ANNUAL INTERDISCIPLINARY CONFERENCE

***“The Status of Armenian Communities
Living in the United States”***

Feature Speaker:

Prof. LYUDMILA HARUTYUNIAN, Ph.D.

Dean of Sociology Department, Yerevan State University

Saturday, April 28, 2007

9:00 am to 3:30 pm

California State University, Los Angeles

5151 State University Drive,
Los Angeles, CA 90032

Registration – \$25

Student Registration – \$15

Program and registration available at

WWW.AGBU.ORG/HYEGEEN

Send inquiries to: agbuhyegeen@gmail.com

AGBU CENTENNIAL SPONSOR



6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com



ԱՊՐԻԼ 24

«ԵԿԷՔ ԻՄԱՆԱՆՔ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԹԵ ԻՆՉ ՊԱՏԱՅԱԾ Է 1915-ԻՆ»

Շարունակում է 1-ին

վնարուի: Վերջապես, բռնագրաւուած հողերու վերադարձը անոնց իրատիրոջ հայ ժողովուրդին՝ անսակարկելի իրաւունք է նույնպէս: Նաեւ՝ տեղի ունեցած ելոյթներուն մէջ, շեշտը դրուեցաւ, այն իրողական հանգամանքին վրայ, թէ հայոց դէմ գործադրուած ճեղասպանութիւնը արձանագրելու վրայ է, լայն, միջազգային նախադէմ: Նոյն գծով, ճեղասպանութիւնը տակաւ ուրացող արիւննուտ Օսմանեան կայսրութեան ժառանգորդ արդի Թուրքիա, իր գիւնդին մէջ չուր սկսած է խառնել:

Առանձնակի յիշատակութիւն որպէս, կրնանք արձանագրել, թէ այս տարի, իր տեսակին մէջ առաջին անգամ ըլլալով, գերագանցապէս յատուկ պաշտօնական յայտարարութիւն-հաղորդագրութիւն մը լոյս բնծայեց ԱՄՆ-ի Ուաշինկթընի թուրք Դեսպանատունը 1915-ի ճեղասպանութեան կապակցութեամբ:

Համանուն կոչին մէջ, վկայութեան կանչուած են, նաեւ, Նախագահներ Չորն Պուշի եւ Պիլ Կլինթընի, ինչպէս նաեւ պետական Բարտոլոմայի Գոնտոյեզա Բայսի խօսքերը Ապրիլեան ոգեկոչումներու առիթով:

Ներկայ հաղորդագրութիւնը տպուած է «Լուս Աննելլա Թայմզ» օրաթերթի Ապրիլ 23 համարի, վերջին 18-րդ էջի վրայ: Հաղորդագրութիւնը կը կրէ հետեւեալ վերտառութիւնը. «Եկէ՛ք Իմանանք Իրականութիւնը, թէ Ի՞նչ է Պատահած 1915-ին»:

Մինչ Թուրքիոյ ընդ որ ան կտրականապէս արգիլած էր «ճեղասպանութիւն» բառի գործածութիւնը իր հողային տարածութիւն-

ներուն վրայ, փոխարէնը գործածելու համար «Տեղահանութիւն» բառը պետական պաշտօնական միանշանակ տեսակէտը մինչեւ օրս այն էր եղած, թէ «ճեղասպանութիւնը» յերիւրանման էր, որ մշակուած էր հայ ծայրայեղական «Ռոմիթեմի» ներու կողմէ, նսեմացնելու համար Թուրքիոյ վարկը միջազգային քատերաբեմի վրայ: Յետագային, անշուշտ, Թուրքիա իր ուրացման Բաղաճականութիւնը տակաւ պիտի շեշտէր աւելի ու աւելի միջնուելով իր մշակած սուտերու տիրուած մէջ, ապացուցանելու համար, թէ հայերը իրենց գործած են ճեղասպանութիւնը «անմեղ» թուրք ազգաբնակչութեան դէմ:

Այս շունթալից «կոչը», Թուրքիոյ կողմէ տրուած հրաւեր մըն է Հայաստանի Հանրապետութեան, որ կազմուի թուրքու հայ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԷ կազմուած ՄԻԱՑԵԱԼ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ մը, որ գնահատեն 1915 թուին պատահածները:

Մենք նպատակ չունինք մտադրելու հետապնդուած ազգային, Բաղաճական ու միջազգային նպատակները, որոնք ոչ միայն ծանօթ են մեզի հայերուս, նաեւ աւելիով՝ Հայոց ճեղասպանութեան իրագրելի միջազգային հանրային կարծիքին: Անգամ նպատակ չունինք ԱՄՆ-ի պարագլուխներու կողմէ մշտապէս յանկերգուած, այս պարագային Պուշի եւ կամ Կլինթընի կատարուած մէջբերումները: Անոնք կապ չունին մեր նիւթին հետ: Ըսենք պարզապէս, թէ Ի՞նչ է պէտք մեր յանձնախումբերու կազմութիւնը: Կան աշխարհ մը դիզուած փաստաթուղթեր: Կան

ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Շարունակում է 6-ին

յու թիւն ունեցող թիւը, 2,500, իջեցուց 270ի: Այս է ահաւասիկ ամերիկեան տրամաբանութիւնը, ընդհանրապէս:

Ի՞նչ է հայոց ցեղասպանութեան պարագան

Հակառակ որ 1975ին ամերիկեան Գոնկընթիւր ընդունած էր ցեղասպանութիւն արտայայտութիւնը, այդ թուականէն առիւն, յաջորդ նախագահները, մինչեւ Չորն Պուշ, կը խուսափին այդ բառը գործածելէ, քանի որ անոր գործադրութիւնը որոշ պարտաւորութիւններ կրնայ պարտադրել: Ահաւասիկ հոս թաղուած է հարցին էութիւնը: Ամերիկեան էթէ ընդունի 1915ի ցեղասպանութիւնը, այս պիտի նշանակէ որ թուրքերն ալ պարտաւոր պէտք է ըլլան զայն ընդունելու: Անկէ անդին, պարտաւոր պիտի ըլլան հետեւութիւններ հանելու, որոնք հայ դատի թղթածրարի հիմնական կէ-

տերը կը կազմեն: «Հայ դատ» հասկացողութիւնը, մեզի եւ ցեղասպանութիւնը ճանչցող պետութեան համար, երեք բան կը նշանակէ.

- Ցեղասպանութեան ճանաչում
- Նիւթական հատուցում, եւ
- Հողերու վերադարձ

Ամերիկեան եւ Թուրքիան լաւ գիտեն այս կէտերը, եւ իրենց գործին չի գար ճանչնալու առաջին կէտն իսկ, քանի որ անոր պիտի հետեւին, անպայմանօրէն միւս երկուքը: Երբ այս տողերը կը գրուին, Ապրիլ 24ի օրերն են, եւ մեզի եւ աշխարհին համար յայտնի պիտի ըլլայ Ամերիկայի բանաձեւումը նախորդ տարիներու նման:

Օրերը յուսադրիչ չեն: Սակայն մեզի ի նպաստ աշխատողներ կան Գոնկընթիւ մէջ: Սպասումը կրնայ երկար չտեսել, եւ սակայն հայ ժողովուրդը եւ իր բարեկամները, աշխարհով մէկ, պիտի աշխատին մինչեւ թուրք կառավարութեան պարտադրութիւնը՝ հայ ժողովուրդի անժամանցելի իրաւունքները յարգելը...

Եղեռնի յաջորդող պարտեալ Թուրքիոյ Ազգային Խորհրդարանի մահուան եւ ցլեանս քանտարգելութեան դատապարտող արձակուած վնիւնները հայոց դէմ գործադրուած ցեղասպանութեան հեղինակ, իրքի-հատական ղեկավարներ՝ Տօֆ. Նագրմներու, Շեհալտիմներու, Յեմալներու, Թալաթներու, Էմվերներու եւ այլոց դէմ: Կան թուրքական երեսփոխանական ժողովի անդամ պետական մարդոց ականատեսի, միջազգային Բաղաճական դէմքերու, դիւանագէտներու, Ա. Աշխարհամարտի թրքական բանակի մէջ ծառայած թուրքու գերման գիւնուորա-

կաններու, մտաւորականներ՝ Ֆրանց Վերֆելներու զգայացունց ու մարդկօրէն անհաւատալի ցնցիչ վկայութիւնները, որոնք անվերանալի փաստաթուղթեր են:

Այս կոչը կու գայ ապացուցանելու, որ Թուրքիա ետ Բայլ մը կատարելով իր յամառ մերժում մըն մէջ, կը փորձէ ընդունիլ, թէ ի վերջոյ բան մը պատահած է 1915-ին, որուն գնահատութիւնը կը թողու հայու թուրք պատմաբաններու միացեալ յանձնախումբին:

Մանկական խաղ մը, որուն պիտի յաջորդէ անշուշտ, հարագատ գիւնի համտեսումը:



Wahib's
MIDDLE EAST RESTAURANT
الشرق مطعم
MEDITERRANEAN LEBANESE FOOD



Wahib

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION



FAMILY ENTERTAINMENT BANQUET HALL EVERY FRIDAY ~ & ~ SATURDAY NIGHT

INTERNATIONAL ~ ARABIC CALL FOR RESERVATION

BELLY~DANCING



MOUHAMAD SALEM & HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԱԾ ԷՋ 5-ԷՆ

Շարունակուած էջ 5-էն

ահագնացող չափերի է հասել իսլամիզացումը: Հայոց ցեղասպանութիւնը թուրքիայի համալիր ինդիւրների շարքում է, սակայն այն առանձնացնելով՝ պէտք է ասեմ, որ ժխտողականութեամբ թուրքիան իր ժողովրդին կը դատապարտի քաղաքակրթական մեկուսացման: Իհարկէ, թուրքիայի հետ առեւտուր կ'անեն, կը համարեն ռազմավարական դաշնակից, սակայն թուրքիայի հասարակական գիտակցութեան, միաջագագային հանրութեան գիտակցութեան մէջ որոշակի վերաբերման բացակայութեամբ կը լինի՝ թուրքիան կը լինի միակ երկիրը, որը կը ժխտի, իսկ աշխարհը կամ աշխարհի մեծ մասը կը պնդի, որ 1915թ-ի դէպքերը ցեղասպանութիւն են:

-Ակնյայտ է, որ թուրքիան չի ուզում մեկուսանալ եւ փորձելով դառնալ ԵՄ անդամ, միաժամանակ 301 յօդուած է կիրառում՝ Դայոց ցեղասպանութիւնը ճանաչողներին պատժելու համար: Ինչպէ՞ս սա կը բացատրուի:

-Թուրքիայի կառուցուածքը շատ բարդ է, բազմաշերտ, պատառոտուած հասարակութիւն ունի եւ հանդէս չի գալիս իբրեւ մի ամբողջ մարմին: Չափազանցեցուած չէ այն տեսակէտը, թէ թուրքիայի առաջացած գոյութեան ինդիւր է դրուած, եւ այդ գոյութիւնը չի կարող փրկել այդքան գովաբանուած թուրքական բանակը: Թուրքիայում կայ ազգային էլիտայի ռոտացիայի ինդիւր՝ գալիս են իսլամիստներն ու փորձում ամրացնել իրենց դիրքերը, իսկ նրանց հակադրուած են աթաթուրքեան աշխարհիկ ուժերը: Այսինքն՝ թուրքիայում կարող է մի քոս սկսուել, եւ այն վերահսկելի չլինելու դէպքում, թուրքիան իր ներքին բաժանարար գծերի պատճառով կարող է փլուզուել: Այս առումով, ինչ-որ չափով արդարացուած, Հայոց ցեղասպանութեան դերը թուրքիան ընդունում է իբրեւ կատալիզատոր, որը փլուզում է իր ամբողջ համակարգը:

-ԵՄ-ի մութ թափախանքի անդամակցութիւնը ի՞նչ կը տայ մեզ: Մեր հասարակութեան մի մասի կարծիքով դա բխում է ԻԻԻ- շահերից, իսկ միւսի՝ ոչ:

-Իհարկէ, մենք չենք ուզում, որ թուրքիան լինի անկանխատեսելի կամ պայթուած տանգ: Մենք ուզում ենք մեր կողքին լինի արեւմտեան արժէքներին դաւանող երկիր: Ի դէմս թուրքիայի՝ մենք կ'ուզէինք, որ գործընկեր լինենք, եւ նա էլ մեզ ընդունի իբրեւ գործընկեր, եւ ոչ թէ այդ յարաբերութիւնները տեղափոխի մեզ պարտութեան թուրքիան համատեքստ, այսինքն՝ ատրպէյճանցիները մեր եղբայրներն են եւ «մէկ ազգ երկու պետութիւն» կարգախօսով շրջափակեն մեզ: ԵՄ-ին թուրքիայի անդամակցութեան մասին խօսելիս նախ պէտք է հաշուի առնել այդ երկրի կառուցուածքը, թէ թուրքիայում ովքեր են դէմ եւ կողմ ԵՄ-ի անդամակցութեանը: Այսօր թուրքիայում ահագնացող չափերի են հասնում հակաեւրոպական տրամադրութիւնները: Մենք պէտք է ընդամենը նկատի ունենանք, եթէ այսօր թուրքիան չի գնում դէպի Եւրոպա, ապա ու՞ր է գնում: Իհարկէ, մենք կը ցանկանանք թուրքիայի հետ յայտնուել մէկ բլոկում, որտեղ խաղի կանոնները նոյն են: Դրանով կը լուծուէին շատ հարցեր՝ եւ շրջափակման եւ դիւանագիտական:

-Եւրոպական մի շարք երկրներ այսօր թուրքիայի առաջ դնում են ոչ միայն 1915թ-ի ցեղասպանութեան ճանաչումը:

ճանաչում, այլեւ՝ հայ-թուրքական սահմանի բացման հարցը: Սահմանի բացումը թուրքիայի համար նոյնքա՞ն վտանգալոր է, որքա՞ն ցեղասպանութեան ճանաչումը:

-Հայկական կողմից սահմանը բաց է, այն փակ է թուրքական կողմից: Թուրքիայում հետապնդման մանրան հասնում է պետական մակարդակի: Սահմանի բացումը դրական կ'անդրադառնայ մեր տնտեսութեան վրայ, սակայն միաժամանակ բազմաթիւ հարցեր առաջ կը քաշուեն՝ կապուած ՀՀ ազգային անվտանգութեան հետ: Թուրքիայի վախը պայմանաւորուած է նաեւ ՀՀ քաղաքացիների ինտենսիվ հոսքով թուրքիա: Պատկերացրէ՛ք՝ հզօր հոսքի պարագայում, եթէ մարդիկ սկսեն փնտրել եւ գտնել իրենց բնակավայրերը, ի յայտ կը գան թաքնուած հայեր, որոնք իրենց ինքնութեան շուրջ հարցեր կը բարձրացնեն: Այսօրուայ իրավիճակում մենք պէտք է շատ զգոյշ լինենք Հայոց ցեղասպանութեան հարցում եւ թոյլ չտանք, որ այն վերածուի միջազգային խաղաքարտի: -

-Արդե՞ն չի՞ վերածուել:

-Որոշակի միտում նկատուած է: Այդ իսկ պատճառով սփիւռք զայստան յարաբերութիւններում, քայլերում պէտք է Հայոց ցեղասպանութիւնը որեւէ մեկի մենաշնորհը չլինի: Այս հարցում շատ կարեւոր է Հայոց ցեղասպանութեան ճիշդ մատուցումը, որպէսզի չունենանք հիւանդ հասարակութիւն: Մեզ ամենեւին ձեռնտու չէ գոհի կերպարը: -Դայոց ցեղասպանութեան ընկալման հարցում այսօրուայ մեր հասարակութիւնը առո՞ղջ է:

-Ցաւօք, այսօր մենք հիւանդագին ընկալում ունենք ցեղասպանութեան հարցում:

-Մեր հասարակութիւնը, յատկապէս որոշ քաղաքական ուժեր շատ ծանր են տանում ԱՄՆ-ի՝ ցեղասպանութեան ճանաչումից խուսափելը: Դուք դա կարեւորո՞ւմ եք:

-Եթէ աշխարհի գերտէրութիւնը՝ նախագահի մակարդակով իր ուղերձում անդրադառնում է 1915թ-ի դէպքերին, թէկուզ չօգտագործելով «ցեղասպանութիւն» բառը, որպէս հայ, եւ դա կարեւորում եմ: Մենք նախ չպէտք է մոռանանք, որ ԱՄՆ-ն ունի իր շահերը, Ֆրանսիանն էլ ունի իր շահը, բոլոր երկրներն են ունեն իրենց շահերը: ԱՄՆ-ի պարզապէս, պէտք է ասեմ, որ եթէ ԱՄՆ-ն յարգում է իր պատմութիւնը, եթէ ուզում է աւելի արժեւորել իր գործողութիւնները, իր մարդասիրական օգնութիւնը 20-ականներին սկզբին, ապա պէտք է ճանաչի Հայոց ցեղասպանութիւնը: Պէտք է ամէն տարի սպասել, որ ապրիլի 24-ին ԱՄՆ նախագահը կ'օգտագործի «ցեղասպանութիւն» բառը եւ լետոյ հիասթափուել: ԱՄՆ-ի քայլերը մենք պէտք է դիտարկենք միջազգային քաղաքականութեան կոնիւկտուրայից եւ միաժամանակ մեր ինդիւրը մատուցելու բանաձեւ մշակենք:

-Այսօր մենք չունենք 1915թ-ի ցեղասպանութիւնը աշխարհին մատուցելու բանաձեւ:

-Այն մշակման փուլում է: Իսկ մինչ այդ կ'ուզենայի, որ գոնէ Ապրիլի 24-ին մենք բոլորս Ծիծեռնակաբերդ այցելինք որպէս հայ՝ առանց տարբերանշանների, կուսակցական եւ տարբեր խմբակային պատկանելութեան: Այդ օրը մեզ համախմբում է մեր յիշողութիւնը:

Զրուցեց ՎԻԿՏՈՐԵԱ ԱՔՐԱՀԱՄԵԱՆ

ԽՐԻՍՏԻԱՆ ԶԱՅՐԻԿ ԱՌ ԿԼԱՏԹԱԹՕՆ

Շարունակուած էջ 7-էն

անտի միշտ միակ նպատակ ունեցեր է, այն է՝ իւր երկաթեայ գաւազանով ջախջախել քրիստոնեայ հպատակ ժողովուրդը: Եթէ հզօր տէրութեանց սուրբ չկախուէր նորա գլխոյն վերայ եւ նա չ'ակնածէր ժամանակի քաղաքակրթութենէն, վաղուց քրիստոնեայ անուն ջնջած էր իւր տիրապետութեան աշխարհէն: Թողունք անցեալ պատմութեան իւր վայրենի արշաւանաց այնչափ աղէտներն, միթէ այսօրուայ Հայոց աշխարհի ողբալի վիճակը հաստատ ապացոյց չէ՞ իւր աւերիչ աշխարհավարութեան:

Սոյն երկրորդ պատճառին յարակից մի այլ երրորդ պատճառ եւս կայ, որ միշտ անլուծելի կը մնայ, այն է՝ Արեւելեան ինդիւր կամ անհամաձայնութիւն Եւրոպայի տէրութեանց: Ահաւասիկ այս առիթէն միշտ օգուտ քաղելով Տաճկաց Սուլթան, հանգիստ, անկախած նստած է իւր նաւահանգիստ: Եւ թէ փչեն կողմնակի հովեր, նա գիտէ իւր առաջատ բանալ: Այնչափ անհոգ ու ապահով է նա, մինչեւ առած է դարձեր Տաճկաց մէջ, թէ «թո՛ղ կեանքներ կուրին, մեզ համար հանգիստ լինի»: Բայց այսօր սաստիկ վրդոված է, քուն եւ հանգստութիւն չունի, երբ հզօր Անգլիան շարժեալ ի քրիստոնէական մարդասիրութենէ, պաշտպան լինել կ'ուզէ Հայոց դատին, որ Աւետարանի այրի կնոջ պէս Եւրոպայից մեծ դատաւորաց դունեւրուն առաջ կեցած կ'ողորակէ. «Դատարարէ՛ ինձ յոստի՛ իմմէ՛»:

Այո՛, Հայոց անդադար թախանձանքէն ձանձրացեալ աշխարհի մեծ դատաւոր Անգլիան կ'ուզէ վերջացնել Հայուն դատը: Այլ հրաւեր կարգալով աշխարհի միւս դատաւորաց, երբ սեղանի շուրջ նստին, որ իւր հետ միանալով խորհին, համաձայնին, վճռեն եւ վերջ տան Արեւելեան ինդիւրին, աստ ահա խոյս կու տայ Աւետարանի մարդասիրութեան հոգին եւ կը յաջորդէ քաղաքականութեան դիւանագիտութիւն: Եւ Դուք քաջ գիտէք. Տէ՛ր, թէ մէն մի տէրութիւն իւր առանձին շահաբաժին ունի Արեւելեան ինդիւրին մէջ: Եւ որովհետեւ անհնարին կը թուի որ շահաբաժիններ հաւասար լինն եւ համաձայնութեամբ վերջանայ ինդիւր, սորա համար է որ ինդիւր դժուարութեան կը բաղիս, եւ հետեւապէս դժբախտ հայու ինդիւր անլոյծ կը մնայ եւ դատաւորներ կը թողուն ատեանը: Եւ ի՞նչ կը լինի յայնժամ, շատ յայտն ի է այս: Յետինն չար կը լինի եւ աւելի եւս վատթարագոյն քան գառաջինն: Եթէ այս անգամ եւս, Աստուած մի՛ արասցէ, Սուլթան իւր օձիքն ազատէ Անգլիոյ գօրաւոր ձեռքէն, այնուհետեւ նա գիտէ թէ ի՞նչ պիտի անէ: Այլեւս նորանոր հարստահարութեամբ պիտի ջլատէ իսպառ հայուն ուժը եւ նորա կեանքը պիտի բառնայ Հայոց աշխարհէն:

Ես որ հայրապետ եւ հովիւ կարգուած եմ համայն Հայոց ազգին, տեսնելով եւ լսելով հօտիս տառապանքն ու չարչարանքը, չեմ կարող հանդուրժել, սիրտս ցաւով եւ վշտակրութեամբ լցուած է եւ հոգիս ճնշուելով ձայն կը բառնամ դէպի քեզ, ո՛վ Դու գրկեալ եւ անկեալ ազգերուն մեծ պաշտպան: Ես լսեցի Քո մարդասիրութեան ձայնը, եւ ահա արձանագան կը լինիմ Քեզ: Փոքր ինչ երկմտութիւն ցոյց կու տաս այն բանախ-

սուութեան մէջ, զոր խօսած էք ներկայացեալ Հայոց պատգամաւորներուն, թէ պէտք է սպասել մինչեւ Յանձնաժողովին քննութեան արդիւնքը երեւան գայ, թէ ստո՞յգ են արդեօք այն ամէն բարբարոս եղելութիւնք, որք գործուած են ի Հայաստան: Այո՛, իրաւունք ունիք այդպէս մտածել եւ այդպէս պահանջում են օրէնք եւ արդարութիւն, եւ գուցէ Դու յուշ բերիք Ս. Գրոց այն պատմութիւն, զի երբ Սողոմոն եւ Գոմորայ չարութեան աղաղակ երկինք հասաւ, Տէ՛ր Աստուած լսեց, բայց սասց. Իջնամ տեսնամ ստոյգ է արդեօք:

Ո տայր Քեզ, որ նոյն Տէր Աստուած, ինչպէս ցոյց տուաւ Եգիպտոս մարգարէին ի Բաբելոն, մի նոր հրաշքով վեր առնէր զՔեզ, բերէր դնէր Հայոց աշխարհ, եւ Դու տեսնայիր աշքովդ այն կենդանուոյն ցամքած ոսկորներ, որ իբրեւ մարդ կը շրջին, այլ կեանք չունին, զի բարձուած է իրենցմէ ամէն մարդկային իրաւունք:

Հայ ժողովուրդն այժմ ճիշդ երիքովի ճամբուն վերայ ինկած անկարելից վիրաւորն է: Մեր դրացի Ղեւտացին, որ շատ մօտ է եւ նորա աչքին առաջն է վիրաւորեալ Հայաստան, նա քաջ տեսնում է նորա դժնդակ վիճակը, բայց զանց կ'անէ: Մանաւանդ երբ ձայն կը բառնայ անկեալ վիրաւորն, երբ հազար մղոն հեռաւորութենէն լսում է Սամարացին, այն է՝ Մեծին Անգլիոյ մարդասիրական հոգին, որ ի գութ շարժեալ դարմանել կ'ուզէ, բայց չուզեր որ ինքն միայն դարմանիչ լինի, այլ հրաւիրում է Ղեւտացուոյն, որ միասին դարմանեն: Մեզ դեռ անյայտ է այդ համերաշխութիւն, միայն հիւսիսային լրագիրք յայտնի հրատարակում են, թէ Ղեւտացին կ'ուզէ ձեռքով լինել այդ բժշկական համախորհուրդէն: Եւ Դու գիտե՞ս՝ թէ նորա միտքն ինչ է եւ ինչ կ'ասէ. «Ես ազատեցի Արարատեան աշխարհ եւ էջմիածին Պարսից բռնութենէն, միայն իմ իրաւունքն է նոյնպէս ազատել Մեծ Հայաստան Տաճկաց բռնութենէն»: Իսկ իւր ազատութեան գին եւ պայման բացարձակ տիրապետութիւնն է:

Այլ ինձ այնպէս թուի, եթէ Անգլիոյ հզօր տէրութիւն ինչպէս սկսած է, պնդէ եւ յարատեւ է իւր վճռական ձայնով, յայնժամ թէ կամաւ թէ ակամայ պիտի համաձայնի Ռուսիոյ տէրութիւն, մանաւանդ երբ Պերլինի դաշնագրութեան 61րդ Յօդուածին վերայ հիմնուի Հայաստանի բարենորոգումն: Բայց կարի անհրաժեշտ պէտք է, որ բարենորոգիչ քրիստոնեայ իշխան լինի՝ մի որոշ սահմանադրութեամբ, որպէս է Լիբանանի հաստատեալ բարեկարգութիւն, որով այժմ այդ լեռնային ժողովուրդը ազատ կերպով կը յառաջդիմէ:

Իբրեւ քաղաքացի ինդիւր ինձ համարձակութիւն է այդպիսի միտք յայտնել, վասնզի Մեծին Անգլիոյ վարչական իմաստութիւն, որ յայտնի է աշխարհին, գիտէ քաջ այնպիսի իշխանութիւն մի կազմակերպել ի Հայաստան, որ յարմար լինի տեղական հանգամանաց:

Կ'աւարտեմ նամակս, թէպէտ երկարեցաւ, բայց գիտէ Ձեր մեծագագ օղին, որ վշտակրեալ հոգին խօսիլ կ'ուզէ:

Ի Նոր-Նախիջեւան, 3 Ապրիլ 1895 Մկրտիչ Կ. Ա. Հայոց

ՍԱՐՁԱԿԱՆ

ՐԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՆՈՒԱՃԷ ԾԱՆՐԱՍԱՐՏԻ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆԸ

Եւրոպայի 2007թ. առաջ-նութիւնում Ծանրամարտի Հայաստանի հաւաքականը թիմային պայքարում գրաւեց 1-ին հորիզոնականը: Հայ ծանրորդները նուաճեցին 18 մեդալ, որից 10-ը՝ ոսկէ:

Հայ ծանրորդների յաղթարշաւը սկսեցին կանայք: 63կգ քաշային կարգում Մելինէ Դաւուդեանը դարձաւ Եւրոպայի ախոյեան՝ երկամարտի արդիւնքում գլխավորեւում պահելով 243 կգ: Մելինէի այս յաջողութիւնը գգայիօրէն բարձրացրեց Հայաստանի հաւաքականի մարտական ոգին եւ արդէն յաջորդ օրը մեդալներ նուաճեցին մեր միւս աղջիկները՝ Նազիկ Աւագեանը եւ Հռիփսիմէ խոբոյեանը: Նազիկը 69 կգ քաշային կարգում բաւարարուեց արծաթէ մեդալով, իսկ 75 կգ Հռիփսիմէ խոբոյեանը դարձաւ Եւրոպայի ախոյեան:

Տղամարդկանից առաջին մեդալը Հայաստանին բերեց 69կգ Տիգրան Մարտիրոսեանը: 18-ամեայ ծանրորդը դարձաւ Եւրոպայի փոխ-ախոյեան, սակայն ախոյեան դարձած ֆրանսացուն բարձրացրած կիրգրամներով չէր գիշում, պարզապէս անձնական քաշով մի փոքր ծանր էր նրանից:

Շատ յաջող հանդէս եկան 77 կգ քաշայիններ Արա խաչատրեանը եւ Գէորգ Դաւթեանը: Հայ ծանրորդները առաջնութիւնը վերածել էին Հայաստանի առաջնութեան եւ միմեանց հետ պայքարում էին Եւրոպայի ախոյեանի կոչման համար: Ի վերջոյ յաղթեց Դաւթեանը՝ 2-րդ անգամ դառնալով Եւրոպայի ախոյեան, իսկ աշխարհի առաջնութեան բրոնզէ մեդալակիր Արա խաչատրեանը նուաճեց արծաթէ մեդալներ:

Ցաւօք, քաշային յաջորդ կարգերում հանդէս եկած մեր միւս երկու ծանրորդներին չյաջողուեց այլեւս մեդալներ նուաճել: Մինչեւ 85 կգ քաշային կարգում Արսէն Մելիքեանը երկամարտի 350 կգ (160+190) արդիւնքով բաւարարուեց 9-րդ տեղով:

Հայաստանից վերջինը մրցաւարթակ դուրս եկաւ Ռաֆիկ Չա-



Եւրոպայի ախոյեան Հռիփսիմէ Խոբոյեան

խոյեանը: Նա եւս վստահ հանդէս չեկաւ եւ երկամարտի 375 կգ (175+200):

Ուրախալի է, որ օլիմպիական խաղերի մեկնարկից 1.5 տարի



Եւրոպայի ախոյեան Գէորգ Դաւթեան

առաջ Հայաստանի հաւաքականը գտնուում է փայլուն մարզավիճակում: Բոլոր նախադրեանները կան, որ հայ ծանրորդներից բարձր արդիւնքներ ակնկալենք առաջիկայում կայանալիք մեծ մրցաշարերից:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

ԱՆԳՆՈՒՅՑ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան 35-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Թոթենհամ - Արսենալ	2-2	Ֆուլհամ - Պլեյքլըն	1-1
Պոլսըն - Ռիտինկ	1-3	Լիվըրփուլ - Ուիկան Աթլ.	2-0
Չարլթըն - Շեֆիլտ Եուն.	1-1	Մանչեսթըր Եուն. - Սիտըլգայորո	1-1
Ուեսթ Յամ - Էվըրթըն	1-0	Նիւքեմսթըր - Չելսի	0-0
Ուաթֆորտ - Մանչեսթըր Սիթի	1-1	Ասթոն Վիլլա - Փորթսմութ	0-0

Առաջատար խումբերու դասաւորումը						
Մանչեսթըր Եունայթըտ	34	26	4	4	78-24	82
Չելսի	34	24	7	3	60-20	79
Լիվըրփուլ	35	20	7	8	54-22	67
Արսենալ	35	18	9	8	59-33	63
Էվըրթըն	35	14	12	9	46-31	54
Պոլսըն	35	16	6	13	42-45	54
Ռիտինկ	35	15	6	14	48-42	51

ԳԵՐՄԱՆԻՅԱ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ ֆութպոլի առաջնութեան 30-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Վարտըր Պրէյմըն - Ալբըն	3-1	Յերթա Պերլին - Տորթնուստ	0-1
Վոլսպուրկ - Արմ. Պիւլֆելտ	2-3	Շթուքկարթ - Պայերն Միւնխի	2-0
Շալքե-04 - Քոթայիւս	2-0	Յանովեր-96 - Սեօնշտընկլատպախ	1-0
Պ. Լիվըրքուզըն - Նիւրնպըրկ	2-0	Յանպուրկ - ՖՍՎ Մայնց	2-2
Այնթ. Ֆրանքֆորթ - ՎՖԼ Պոխում	0-3		

Առաջատար խումբերու դասաւորումը						
Շալքե-04	30	19	5	6	49-26	62
Վարտըր Պրէյմըն	30	18	6	6	67-34	60
Շթուքկարթ	30	17	7	6	53-32	58
Պայերն Միւնխի	30	16	5	9	44-35	53
Պ. Լիվըրքուզըն	30	13	6	11	47-42	45
Նիւրնպըրկ	30	10	14	6	41-28	44
Յանովեր-96	30	10	8	12	37-41	38

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆութպոլի առաջնութեան 33-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Փարիզ Սեն Ժերմէն - Նանթ	4-0	Լանս - Լը Մանս	2-0
Մարսէլ - Թրուա	2-1	Րընէ - Թուլուզ	3-2
Նանսի - Վալանսիէ	1-0	Սոչո - Լորիան	1-1
Սըտան - Նիս	1-1	Օքսէր - Լիոն	0-0
Սոնաքս - Լիլ	3-1	Սէնթ Էթիէն - Պորսո	0-2

Առաջատար խումբերու դասաւորումը						
Լիոն	33	21	8	4	55-23	71
Լանս	33	14	11	8	44-33	53
Պորսո	33	15	7	11	36-31	52
Թուլուզ	33	15	7	11	37-35	52
Մարսէլ	33	14	7	12	42-33	49
Րընէ	33	12	12	9	29-26	48
Սոչո	33	12	13	9	38-38	48

ԻՏԱԼԻՅԱ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆութպոլի առաջնութեան 33-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Սամտորիա - Մեսինա	3-1	Էմպոլի - Թորինո	0-0
Ա. Սէ. Միլան - Քալիարի	3-1	Աթալանթա - Ա. Էս. Ռոմա	2-1
Քիեւո - Լիվորնո	2-1	Լացիո - Ֆիորենցինա	0-1
Ռեճինա - Ուտինէզէ	1-1	Փալերմո - Փարմա	3-4
Սիենա - Ինթեր Միլան	1-2	Քաթանիա - Ասքոլի	

Առաջատար խումբերու դասաւորումը						
Ինթեր Միլան	33	26	6	1	68-29	84
Ա. Էս. Ռոմա	33	20	8	5	66-26	68
Ա. Սէ. Միլան	33	18	10	5	53-30	64
Ֆիորենցինա	33	18	8	7	52-28	62
Լացիո	33	17	9	7	54-27	60
Էմպոլի	33	13	11	9	35-31	50
Փալերմո	33	13	10	10	49-43	49

ՍՊԱՆԻՅԱ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆութպոլի առաջնութեան 31-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Ռէալ Մադրիտ - Աթլէթ. Մադրիտ	2-0	Սելիլա - Աթլէթ. Պիլպասո	4-1
Ռէալ Մադրիտ - Վալենսիա	2-1	Էսփանիոլ - Ռէալ Պաթիս	2-2
Սարակոսա - Սելթա Վիկո	2-0	Յուելվա - Ռասինկ	4-2
Լեվանթ - Կեթաֆէ	1-1	Տեփ. Քորունա - Օսասունա	1-0
Մայորքա - Կիմնասթիք	1-0	Վիլառեալ - Պարսելոնա	2-0

Առաջատար խումբերու դասաւորումը						
Պարսելոնա	31	17	8	6	60-29	59
Սելիլա	31	17	7	7	52-27	58
Ռէալ Մադրիտ	31	17	6	8	44-28	57
Սարակոսա	31	15	8	8	45-30	53
Վալենսիա	31	16	5	10	43-31	53
Աթլէթ. Մադրիտ	31	14	8	9	35-26	50
Յուելվա	31	14	7	10	45-41	49

ՇՆՈՐԱԴՈՐԱՆՔ

Օրդ. Արուսեակ Հայրապետեան ընդ

Պրն. Կէրի Սինանեան Ամուսնացեալք Կիրակի, 22 Ապրիլ, 2007 Լոս Անճելոս

Այս ուրախ առիթով «Մասիս» կը շնորհաւորէ նորապսակները եւ կը խնդակցի իրենց ծնողաց, հարազատներուն եւ մերձաւորներուն, մասնաւորաբար՝ Տէր եւ Տիկին Սամուէլ եւ Արուսեակ Սինանեաններուն:

ՔԱՋ ՆԱԶԱՐ ՌԴԴՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:00 Կլէմտէյլի 26-րդ կայանից

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»

ՅԵՌՈՒՄՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
ԿԼԵՆՏԵՅԼ - ՊԸՐՊԵՆՔ - ԼԱ ՔՐԵՍԵՆԹ
ՅԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Հանգուցեալ Տիար Ներսէս Նալպանտեանի մահուան տխուր առիթով, Կիլիկեան Կրթական Միութեան Կեդրոնական Վարչութիւնը, կու գայ յանուն բոլոր կիլիկեանցիներուն իր խորագրաց ցաւակցութիւնները յայտնելու, հանգուցեալի այրիին Տիկին Անայիս Նալպանտեանին, գաւակներուն, յատկապէս վարչութեան քարտուղար Տիար Յովսէփ Նալպանտեանին եւ համայն հարազատներուն ու բարեկամներուն:

Արդարեւ Պրն. Ներսէս Նալպանտեան եղած է նուիրեալ կիլիկեանցի մը, վարած է բազմաթիւ վարչկան պաշտօններ, երկար տարիներ եղած է Կիլիկեանի հոգաբարձութեան ատենադպիր, նոյն ժամանակ ծառայած է Հայէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ որպէս դպիր ապա Սարկաւազ: Ան սիրուած եւ յարգուած դեկավար մըն էր իր ամբողջ շրջապատին կողմէ:

Թող Աստուած անոր հոգին երկնքի արքայութեան արժանի ընէ: Կիլիկեան Կրթական Միութեան Կեդրոնական Վարչութիւն

Այս տխուր առիթով շնորհակալութեամբ ստացած ենք փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները:

Տէր եւ Տիկ. Կարպիս Պալըզեան	\$100
Տէր եւ Տիկ. Յարութ Տէր Դաւիթեան	\$100
Տէր եւ Տիկ. Մհեր Յովհաննէսեան	\$100
Տէր եւ Տիկ. Սամուէլ Ասատրեան	\$100
Տէր եւ Տիկ. Սոնա Նալպանտեան	\$100
Տէր եւ Տիկ. Վարդան Եղաւթեան	\$100
Տօքթ. եւ Տիկ. Յարութ Եղաւթեան	\$100
Տօքթ. եւ Տիկ. Ռուբէն Եղաւթեան	\$100
Տէր եւ Տիկ. Կարապետ Եղաւթեան	\$50
Տէր եւ Տիկ. Անդրանիկ Թումանեան	\$50
Տէր եւ Տիկ. Սամուէլ Յարութիւնեան	\$50
Տիկ. Սարա Սաղրեան-Շիշմանեան	\$50
Մարի եւ Լիզա Քահլէճեաններ	\$50
Տէր եւ Տիկ. Ջարեհ Պէրպէրեան	\$50
Տէր եւ Տիկ. Վահէ Էքմէքճեան	\$50
Տիկ. Ջարուհի Մարտիկեան	\$50
Տէր եւ Տիկ. Մէլքօ Հաստատութիւն	\$40
Տէր եւ Տիկ. Արամ Վարդանեան	\$35
Տիկին Ալիս Վարժապետեան	\$30
Տիկին Մարի Պէգճեան	\$30

ՊՈԼՍԱՐԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԱԾ ԳԻՆԵՉՕՆԻ ԸԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 8-էն

սիկ եւ երբեմն ալ ժամանակաւոր սէրեր: Կան նաեւ Կոմիտաս Վարդապետին նուիրուած բանաստեղծութիւններ, Սայաթ Նովային ինչպէս նաեւ Ջօրավար Անդրանիկի մասին: Անոնց գորաւոր եւ հակասական պատկերները կը ներկայացնեն սիրտն ու հոգին: Ան 20 տարի յետոյ աւելի խորանալով կը նոյնացնէ համաշխարհային մեծ դէմքերուն հետ: Սարոյլանեան ընդհանրապէս կեդ-ծաւորութիւն եւ լայիւր կեանքի դէմ դրօշակ պարզած է, նկարագրելով հանրատուններու մէջ կեանք մաշեցուցած մարդկանց վիճակը: Կայ նաեւ Հայութեան եւ Հայաստանի մասին երեք քերթուածներ, «Մենք հայեր ենք», «Երեւանեան Սիրահարներ» եւ «Իմ Հայաստան»: Սարոյլանեանի մասին երկու կարծիքներ յայտնած է նաեւ Նիզար Խալիլի, որ 25 արաբերէն ոտանաւորներ հայերէնի թարգմանած է: Սարոյլանեանի քառուկները ապրուած կեանքի մը ապացոյցն են: Թէեւ դժուար կը գրուին: Ունի մայրերու եւ մանուկներու եւ այլ բաժնուած խումբերու մասին ալ քերթուածներ: Տեղ-տեղ ան յոռետես է: Վերնագիրները «Փուճ կեանք», «Կեանքը սուտ է» տխուր եւ յոռետես նայուածք մը ունին իր բանաստեղծութիւններուն մէջ, որոնք երկարաշունչ են եւ կը բաղկանան 107 տուներէ եւ որոնք ապրուած կեանքի մը տխուր ու ժխտական երեւոյթներն են, տառապանքի եւ անյուսութեան վիճակներու: Կեանքի մէջ լաւ բան չտեսնելու դժբախտութեամբ այդ դրսեւորումով կ'ուզէ գոռուցանել մարդ արարածին որ կեանքի մէջ կան տխուր եւ տխրեղ վիճակներ որ մարդ արարածը պէտք է գոռուցանայ: Ան տեղ-տեղ ալ լոյսի

ծամբայ ցոյց կու տայ եւ քիչ մը ժլատ առումով կ'ըսէ «Ո՛ւր ես մարդկութիւն, ո՛ւր է խիղճը քո» յանգելով ճանապարհի մը որ հաւատքի ուղին է: Հանդիսավարուհին յաջորդաբար կարդաց նաեւ բանաստեղծ Նիզար Խալիլիի սրտի խօսքը գոր հեռաձայնով յղած էր, ինչպէս նաեւ Պուէնոս Այրէսի ՀԲԼՄիութեան ատենադպիր՝ Անթօնի Սարաֆեանի սրտի խօսքը: Ապա հանդիսավարուհին հրաւիրեց երգիչ Յովիկ Գրիգորեանը որ մեներգեց «Գարնանային Վալս»ը խօսք եւ երաժշտութեամբ՝ Պետրոս Սարոյլանեանի դաշնակի ընկերակցութեամբ՝ Սիլվա Գաւուքճեանի: Յետոյ Տիկ. Մարտիրոսեան ասումներէ «Այս Գիշեր» եւ «Դու Հեռանում ես» բանաստեղծութիւնները: Հեղինակին «Պէյրութի Գիշերները» հատորի վերլուծումը կատարեց գրականագէտ Սարգիս Մաճառեան, որ շնորհակալութիւն յայտնեց Պոլսահայ Միութեան՝ իրեն առիթը ընծայելուն համար ներկայացնելու վիպաթատերական բնոյթ ունեցող հատոր մը: Ան քննադատական արժեւորում չէ որ կատարեց այլ՝ կարգ մը գիտարկումներ եւ փոխանցեց նաեւ իր սպաւորութիւնները: Մաճառեան շեշտեց թէ վէպին մէջ հերոսներու միջեւ երկխօսութիւնները կը սկսին իրենց անուններով: Ան հաստատում մը ըրաւ ըսելով թէ իր բնոյթով կը դասուի նոյն բնոյթի գիրքերուն շարքին թէ օտարներուն եւ թէ մեր մէջ: Անոր օրէնքները կը բխին ոչ թէ տրամաբանական սկզբունքներէ, այլ՝ սրտի թելադրանքներէ: Որքան ալ ըլլան բուն հերոսը, սրտին խորքը հեղինակն է: Ան կը խօսի միջին ընթերցողի երեւակայութիւն գրգռող

ժխտական եւ դրական դէմքերով, յուզական դրուագներու ներգործումներով: «Պէյրութի գիշերները» ընտանեկան տրամա մըն է, բարի ու չարի այլազան հերոսներով, որուն մէջ հեղինակը կ'ուրախանայ իր հերոսներուն յաջողութիւններով եւ կը տառապի անոնց ցաւերով: Բարիին, ազնիւին, վայելուչին ու վեհագոյնին հանդէպ իր սէրը կը դրսեւորէ հատորին իւրաքանչիւր անցքին եւ դրուագին մէջ: Սոյն վէպը ճիշդի ու սխալի, կեղծի ու իրականի միջեւ մղուող պայքարներով շատ անգամ կը յիշեցնէ Լիբանանի պատկերը, մարդոց սնափառութեան եւ եսի դրսեւորումները: Մաճառեան եզրակացուց իր ապաւորութիւնները որակելով վէպը իբրեւ սիրային արկածախնդրութեամբ յագեցած, խորհրդաւոր, վիպային, զգացական եւ ընտանեկան տրամա: «Պէյրութի Գիշերները» վէպէն ընթերցում կատարեց Մարիէթ Մինասեանը: Ապա հանդիսավարուհին ընթերցեց Պէյրութի «Դիտակ» ամսաթերթի տէր եւ սնօրէն Սէմ Բագուպեանի սրտի խօսքը, ինչպէս նաեւ սիրուած երգիչ Մանուէլ Մենենկիչեանի սրտի խօսքը: Հրաւիրուեցաւ հանրածանօթ երգիչ Ատիս Հարմանտեանը որ իր սրտի խօսքէն ետք ներկայացուց «Արդեօք ի՞նչու» երգը, խօսք եւ երաժշտութեամբ՝ Պետրոս Սարոյլանեանի, դաշնակի ընկերակցութեամբ՝ Սիլվա Գաւուքճեանի: Յաջորդաբար խօսք առաւ հեղինակին լաւագոյն բարեկամներէն եւ իր ուսուցիչներէն՝ Վարուժան Արթինեանը, որ ջերմօրէն ողջունեց ներկաներն ու Տիար Սարոյլանեանը ըսելով թէ այնքան հանգամանօրէն ստեղծագործութեանց լուսաբանութիւնները կատարուեցան իբրեւ սրտի խօսք. ան ըսաւ թէ իր դպրոցական տարիներէն ճանչցած է Սարոյլանեանը, որ բանաստեղծական այս հատորին մէջ իր ցասումն ու բողոքը կ'արտայայտէ յանուն դաժան մարդկութեան: Ան նշեց թէ չ'ուզեր բանախօսել եւ կը թողու մասնագէտներուն: Լսելով Սարոյլանեանի ստեղծագործութիւններն ու երգե-

րը, կը հասկնանք թէ անոնք բացառիկ երեւոյթներ են մեր երաժշտութեան համաստեղին մէջ: Անոնք շարունակութիւնն են միջնադարեան հայ բանաստեղծ Ֆրիկի որ Աստուծոյ կ'ուղղէ իր գանգատը, սակայն Սարոյլանեան դաժան մարդուն, անխիղճ մարդկութեան է որ կ'ուղղէ: Լաւագոյն մաղթանքներով Տիար Արթինեան փակեց իր խօսքը: Ընթերցուեցաւ նաեւ Գանատայի երգիչ Արթիւր Աբգարեանի սրտի խօսքը: Հանդիսավարուհին հրաւիրեց օրուայ մեծարեալը որ շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն որ յարգեցին ու պատուեցին իր անձը եւ գիրքերը, երեկոն կազմակերպող Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբին, բոլոր խօսք առնողներուն եւ հանդիսավարուհիին, մասնաշատուկ շնորհակալութիւն յատնեց երկու հատորներուն մեկեկես՝ Տէր եւ Տիկին Թումայէրեանին, Սարգիս Թօփալեանին որ վերածումները կատարեց Արեւելահայերէնէ՝ Արեւմտահայերէնի, խտասալիկի (CD) ձեւաւորումները կատարող Նունէ Աւետիսեանին, Վարուժան Արթինեանին որուն շնորհիւ է որ ան երաժշտութեան հանդէպ ունեցած է սէր եւ հետաքրքրութիւն եւ վերջապէս երկու երգիչներուն որոնք իր երաժշտական ասպարէզին մէջ ոչ միայն եղան սիրելի անուններ, այլ՝ սրբազան մատուցներ: Ապա հանդիսավարուհին հրաւիրեց հանդիսութեան ընթացքին բոլոր խօսք առնող անձնաւորութիւնները, որպէսզի կատարեն «Գիւնեճօն»ի արարողութիւնը: Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի Ատենապետին կողմէ օրուայ մեծարեալ Պետրոս Սարոյլանեանին նուիրուեցաւ յատուկ յուշատախտակ: Հանդիսութեան աւարտին հեղինակը մակագրեց իր գրած հատորները: Տօքթ. Աւետիքեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն եւ մասնակցողներուն, մասնաւորաբար Պոլսահայ Միութեան Տիկնանց Յանձնախումբին (Ոսկի Զեռքերուն), որոնց կողմէ պատրաստուած էր այդ երեկոյի յատուկ եւ համեղ հիւրասիրութիւնը:

ՊԱՐԱՆՁԵՑԷ...

Շարունակուած էջ 13-էն

թեան շունչ փչի նրանց հոգիներին, երբ այնտեղ սկսի ընձիւղել խղճի արեւալոյս ծաղիկը, երբ նրանից ճառագած լոյսը իջնի նաեւ իրենց մտքերին, այնքամ պիտի կանչեն որ հէքի-աթային գարնան այդ ամսին մարդկայնութեան հանդէպ մեղք են գործել: Եւ այդ ծաղիկը կարծես սկսել է ծլել նրանց որոշ մարդկանց հոգիներում: Ազնուահոգի, հայաշունչ Մաշտոց Հայկական Համալսարանի հիմնադիր՝ Պարոն Կարպիս Եղիայեանի մի առիթով կատարած դասախօսութեանը աւարտին մի թուրք աղջիկ բարձրաձայն լացով դէպի իրեն է վագել, խնդրելով ասել որ արդեօք իր ազգը նման յանցանք է կատարած եղել մարդու հանդէպ, ներողութիւն է հայցել: Եւ այնպստ լինելով այդ ցեղի մտաւորականներ՝ Թանէր Աքչամ, Փամուք, Քեամալ Եալչին, էրթէմ, Շաֆաք, Կէօզէք, Մուրատ խղճահարութեան ու

ճշմարտութեան դրօշ պարզած, յայտարարում են աշխարհին, որ հիմա Անատոլու կոչուած Արեւմտեան Հայաստան երկրում մի լիոնաւոր մարդկանց են սպաննել եւ այն ցեղասպանութիւն է, մի ուրիշը բողոքում թէ ինք ինչքան ատեն կարող է թալի-աթի ու էնվէրի մեղքերը շալակած տանել: Այդ երկրի դեռ ինչքան մտաւորական մարդիկ լեքու են ասում են իրենց նախնիները մարդու հանդէպ յանցանք են գործել: Այո, խղճի հարց է նաեւ, որ կարողանան ընդունել իրենց երկրում ցեղ են սպաննել: Եւ երբ ժողովրդավարութեան տեսլականի հոգմբը սկսեն փչել նաեւ դէպի այդ կողմը աշխարհի եւ մարդիկ ազատ լինեն ասելու այն ինչ խորհում են իրենց մտքերում, խօսքը իրենց լինի ազատ, այնտեղ պիտի հնչի իրենց մեղքերին քառութիւն հայցելու աղաչանքը, եւ հայերը իրենց հաւատքի վարդապետի յորդորով արդեօք պիտի կարողանան ներել նրանց, դժուար է...:

Չեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շարաքաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863

Armenian Athletic Association Ladies Auxiliary
proudly presents


“Fan-tastic Fashion”

*Ladies' & Gentlemen's
Fashion Show Luncheon*

Sunday, April 29, 2007 – Omni Hotel

251 South Olive Street, Los Angeles

10:30am Boutique / Social Hour • 12:30pm Luncheon / Fashion Show



Information & Reservations:

Garine 626-755-4773 gdepoyan@hotmail.com

Dzovig 626-429-8366 vdkoro@yahoo.com

Donation \$75.00